ԶԵԿՈՒՅՑ

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2011

Հետազոտությունը իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համագործակցությամբ իրականացվող «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Ընտրանքը և վերջնական տվյալների բազան ձևավորել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, որը նաև իրականացրել է դաշտային աշխատանքները:

Զեկույցում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետին:

Աշխատանքային խմբի ղեկավար՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ռ. Աբրահամյան

Աշխատանքային խմբի անդամներ՝
Գ.Ավագյան՝ բ.գ.դ., դոցենտ
Վ.Գյուլխասյան՝ բ.գ.թ, դոցենտ
Կ.Կույումջյան
Ա.Սաղաթելյան
Ա.Աղաջանյան
Ա.Առուշանյան

© ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Հայաստան 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4
Հիմնախնդրի էությունը. Հետազոտության մեթոդաբանական եվ մեթոդական սկզբունքները 4
Հետազոտության նպատակը եվ խնդիրները 5
Տվյալների հավաքագրման մեթոդները 5
Ընտրանքի մեթոդաբանությունը 6
Ընտրանքային համակցության նկարագիրը 6
Օգտագործված հիմնական հասկացությունները 7
Հարցաթերթի բովանդակությունը 8

Գլուխ 1. Հարցված կանանց եվ նրանց ամուսինների/զուգընկերների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը 9
Կանանց բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի 9
Կանանց եվ նրանց ամուսինների (զուգընկերոջ) բաշխվածությունն ըստ կրթական մակարդակների 9
Կանանց բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի, ամուսնության եվ հղիանալու միջին տարիքի 10
Կանանց բաշխվածությունն ըստ կրոնական պատկանելության 10
Ընտանիքներն ըստ կազմի և տեսակի 11
Կնոջ և ամուսնու/զուգընկերոջ հիմնական զբաղմունքը, եկամտի աղբյուրը և չափը 12
Տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ հիմնական միջոցների եվ հարմարությունների հասանելիության 14

Գլուխ 2. Հարցվածների մանկաբարձական անամնեզի առանձնահատկությունները, հղիությունների պատմությունները եվ ելքերը 15
Երեխայի սեռը որոշելու համար նախածննդյան փուլում անցկացվող ստուգումները եվ դրանց արդյունքները 20
Հղիությանը ելքը երեխայի սեռը որոշելուց հետո 22

Գլուխ 3. Հղիության արհեստական ընդհատման դիմած կանանց շրջանում կատարված հարցման տվյալները 24

Գլուխ 4. Սեռի ընտրության վրա ազդող գործոնները նախածննդյան շրջանում 28
Նախապատվություն տղա երեխաներին 28
Տղաների նախընտրությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները 31
Սոցիալ-հոգեբանական ճնշումներ 33
Ընտանիքում երեխաների թիվը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները 35
Երեխայի սեռի որոշման և հղիության ընդհատման տեխնոլոգիաների (դեղորայքային, բժշկական միջամտության) վերաբերյալ տեղեկացվածություն և ծառայությունների մատչելիություն 36
Տղաների գերակշռող ծնունդների հետեվանքները ապագայում 38

Եզրակացություն 40

Հավելված 1 42

Հավելված 2 43

Հավելված 3 59

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին երկու տասնամյակներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև բնակչության վերարտադրողական վարքագծի վրա, ինչի արդյունքում արձանագրվել է նաև պտղաբերության մակարդակի (ծնելիության գումարային գործակցի) շեշտակի անկում, ծնունակ տարիքի մեկ կնոջ հաշվով, 2.62 երեխայից՝ 1990թ., մինչև 1.56 երեխայի՝ 2010թ.:

Հայ հասարակության մեջ ավանդաբար նախընտրելի է համարվում առաջին հերթին տղա երեխայի ծնունդը. թեև ընտանիքում աղջիկ երեխան նույնպես ցանկալի է, սակայն տղայից հետո միայն: Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ հաշվի առնելով իգականի համեմատությամբ արական սեռի կենսաբանագենետիկորեն ավելի թույլ լինելու հանգամանքը, ժողովրդագրական հաշվեկշիռը պահպանելու համար արդեն իսկ ի վերուստ սահմանված է տղաների որոշակի գերակշռություն աղջիկների համեմատությամբ, այսինքն տղաներ ծնվում են ավելի շատ, քան աղջիկներ (102-106 տղա՝100 աղջկա դիմաց, հարաբերակցությունը՝ 1,02-1,06): Սակայն արական սեռի մահացության ավելի բարձր մակարդակով պայմանավորված՝ չափահաս տարիքում բնակչության սեռային կազմը գրեթե հավասարվում է, իսկ 65 և բարձր տարիքային խմբերում գերակշռում է իգական սեռը: ՀՀ քաղաքացիական կացության գրանցումներով իրականացվող պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, 1993թ.-ից սկսած արձանագրվել են նորածինների սեռերի կենսաբանորեն ընդունված նորմալ հարաբերակցությունից զգալիորեն բարձր ցուցանիշներ՝ 110-120 տղա՝ 100 աղջկա դիմաց:

Գծապատկեր 1. Նորածինների սեռերի հարաբերակցությունը, 1989-2010 թթ.



Վերջին տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին երեխայի պարագայում տղա/աղջիկ հարաբերակցության գործակիցը կազմել է 1.04-1.07, ինչը համապատասխանում է կենսաբանորեն սահմանված միջին վիճակագրական ցուցանիշին (1.02-1.06) և վկայում է այն մասին, որ սեռի կանխորոշում և ընտրովի աբորտ 1-ին երեխայի դեպքում Հայաստանում չկա, ինչը մեծ խնդիր է շատ այլ երկրներում: Սկսած 2-րդ երեխայից առկա է ցուցանիշի բարձրացման միտում (1.08 – 1.13):

Սակայն իրավիճակը մտահոգիչ է 3-րդ և 4-րդ երեխաների դեպքում, երբ տվյալ ցուցանիշը կազմել է՝

1.6 և 1.7, հիմք տալով ենթադրելու, որ հնարավոր է, որ այդ ժամանակ սեռերի ցանկալի կարգավորումն իրականացվում է հղիության արհեստական ընդհատմամբ, ինչը, բնականաբար, պոտենցիալ վտանգ է պարունակում հետագայում ժողովրդագրական անհավասարակշռության առաջացման տեսանկյունից:

Գծապատկեր 2. Ծնված տղա /աղջիկ երեխաների բաշխվածությունն ըստ ծննդաբերությունների թվի



	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
I	1.07	1.07	1.06	1.06	1.04	1.07	1.06	1.07
II	1.08	1.11	1.13	1.1	1.09	1.1	1.12	1.1
III	1.69	1.75	1.75	1.83	1.78	1.85	1.78	1.59
IV	1.76	1.72	1.61	1.76	1.72	1.84	1.59	1.49
V և ավել	1.2	2.1	1.8	1.19	1.19	1.07	1.19	1.15

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Այս ուսումնասիրության շրջանակներում ևս, ինչպես և ՀՀ ԱՎԾ տվյալներով, տղա/աղջիկ հարաբերակցության առանձնահատուկ անհամամասնություն է արձանագրվել երրորդ և հատկապես չորրորդ ծնունդների դեպքում, ինչը թույլ է տալիս ենթադրելու սեռի պլանավորման և ցանկալի սեռի նպատակով կատարվող ընտրովի աբորտների մասին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է պարզել Հայաստանում երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների տարածվածությունը, ինչպես նաև դրա հիմնական պատճառները, այդ թվում հիմնախնդրի հասարակական ընկալումները:

Հետազոտության հիմնական խնդիրն է պարզել սեռերի անհամամասնության պատճառները, ուսումնասիրելով՝

- տղա կամ աղջիկ երեխայի գերապատվության պատճառների շրջանակը,
- հղիությունների պատմություններն ու դրանց արդյունքները,
- երեխայի սեռը որոշելու համար նախածննդյան փուլում անցկացվող ստուգումները և դրանց արդյունքները:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- Տվյալների հավաքման հիմնական մեթոդը հանրապետության տնային տնտեսություններից պատահականության սկզբունքով ընտրված տնային տնտեսություններում բնակվող 15-49 տարեկան երբևէ հղիացած կանանց հարցումն էր, որն իրականացվեց՝ 2011թ. հուլիսի 15-ից օգոստոսի 15-ը:
- Այդ նույն ժամանակամիջոցում հղիության արհեստական ընդհատման նպատակով բուժհաստատու-

թյուններ այցելած հղիների հարցումը:

- 2011թ. հուլիսին տղամարդկանց և կանանց, ինչպես նաև մանկաբարձ-գինեկոլոգների շրջանում ֆոկուս-խմբերով իրականացված արագընթաց որակական գնահատումը՝ քանակական հարցման ավելի համապարփակ ու հիմնավորված գործիքակազմ ձևավորելու և սեռով պայմանավորված հղիության ընդհատումների պատճառների ավելի խորքային վերլուծություն ապահովելու նպատակով:

ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանակական ընտրանքի ձևավորումը. հիմքը է հանդիսացել ՀՀ բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ստեղծվել է 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ:

Հետազոտության իրականացման նպատակներից և խնդիրներից ելնելով, օգտագործվել է ընտրանքի ստրատիֆիկացված (շերտավորված) եղանակը: Ընտրանքի ողջ համակցության բաշխումն ըստ ստրատաների կատարվել է ըստ 2010թ. անցկացված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի ընտրանքային հետազոտության արդյունքներով արձանագրված 15-49 տարեկան կանանց համամասնությունների: Ընտրանքի ձևավորման համար հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան բաժանվել է 48 ստրատաների (խմբերի), որոնցից 12-ը Երևանի վարչական շրջաններն են:

Մարզային մակարդակով բոլոր տնային տնտեսությունները բաշխվել են երեք կատեգորիաների. մեծ քաղաքներ՝ 15 հազար և ավելի բնակչությամբ (բացառությամբ Վայոց ձորի մարզի), գյուղեր և այլ քաղաքներ (15 հազարից պակաս բնակչություն ունեցող): Մեծ քաղաքները կազմել են 16 խումբ (ստրատա), իսկ գյուղերը և քաղաքները կազմել են 10-ական ստրատա:

Համաձայն այդ բաշխման՝ պատահականության հիման վրա ձևավորվել է ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը, ինչպես նաև գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ ներառվել են երկրի տ/տ ընդհանուր թվաքանակում մարզի/բնակավայրի տ/տ քանակային համամասնությամբ: Ընտրանքում ընդգրկվել են 34 քաղաք և 56 գյուղ:

Առաջին փուլով ընտրվել են բնակավայրերը՝ որպես ընտրանքի նախնական միավորներ: Երկրորդ փուլով ընտրվել են հետազոտության մեջ ընդգրկվելիք 2830 տնային տնտեսությունները, որոնցից 2046-ը՝ քաղաքային, 784-ը՝ գյուղական բնակավայրերից:

Որակական ընտրանքի կազմման մեխանիզմները. ֆոկուս-խմբի ձևավորումը կատարվել է նպատակաուղղված ընտրանքի սկզբունքներով՝ հիմնվելով սոցիալական ցանցի վրա և ապահովելով տիպային ներկայացուցչականություն:

Տարիքը և կրթության աստիճանը դիտվել են իբրև ընտրանքային դոմինանտ գործոններ՝ համակցվելով խմբային քննարկման մասնակիցների սեռի՝ որպես երրորդ գործոնի հետ (համակցության մանրամասն նկարագիրը տես *Հավելված 1*):

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հետազոտության իրականացման համար ձևավորվել է աշխատակազմ՝ հարցազրուցավարներ, որակի հսկիչներ: Հետազոտությանը նախորդող ժամանակահատվածում իրականացվել է հարցազրուցավարների և դաշտային աշխատանքների պատասխանատուների հրահանգավորում՝ ընտրանքի և հարցաթերթի լրացման կարգի վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում հնարավոր էին նաև հարցաթերթը չլրացնելու դեպքեր՝ հարցումից հրաժարվելու, բացակայության և այլ պատճառներով, նախատեսվել էր նաև պահուստային ընտրանք՝ հետազոտության արդյունքների բավարար ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2011թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Յուրաքանչյուր հարցազրուցավար լրացված հարցաթերթերի հետ ներկայացրել է նաև ընտրանքի վերաբերյալ հաշվետվություն:

Հարցաթերթերից թվային տեղեկությունների մուտքագրումից հետո, հետազոտության տվյալների բազան բերվել է վերջնական տեսքի, տվյալները փոխադրվել են SPSS ֆորմատի և կատարվել է աշխատող առանձին ֆայլերի ագրեգացիա տվյալների մեկ բազայի մեջ: Աղյուսակ 1-ում ներկայացված է հետազոտված տնային տնտեսությունների քանակը և կառուցվածքն ըստ մարզերի (ամենամեծ մասնաբաժինն ունի Երևանը՝ 30.2%):

Աղյուսակ 1. Հետազոտված տնային տնտեսությունների քանակը և բաշխվածությունն ըստ մարզերի

Մարզ	S/S քանակը	Տես.կշիռն ընտրանքում, %
Երևան	854	30.2
Արագածոտն	154	5.4
Արարատ	222	7.8
Արմավիր	236	8.3
Գեղարքունիք	208	7.4
Լոռի	236	8.3
Կոտայք	292	10.3
Շիրակ	222	7.9
Սյունիք	182	6.4
Վայոց ձոր	84	3.0
Տավուշ	140	5.0
Ընդամենը	**2830**	100

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեռերի հարաբերակցության գործակից. բնակչության կազմում տղամարդկանց հարաբերակցությունը կանանց նկատմամբ, որը սովորաբար հաշվարկվում է որպես տղամարդկանց թվաքանակը 100 կնոջ հաշվով:

Նորածինների սեռերի հարաբերակցություն. կենդանածին տղաների թվաքանակի հարաբերակցությունը 100 կենդանածին աղջիկների նկատմամբ:

Ծնելիության գումարային գործակիցը կամ պտղաբերության գործակիցը բնութագրում է երեխաների միջին թվաքանակը, որ կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում՝ իր ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում:

Հղիության արհեստական ընդհատում (աբորտ). հղիության դեղորայքային կամ վիրաբուժական ընդհատումը՝ սկսած բեղմնավորման պահից մինչև հղիության 22 շաբաթական ժամկետը:

Ինքնաբեր վիժում. առանց արտաքին միջամտության հղիության ընդհատումը՝ սկսած բեղմնավորման պահից մինչև հղիության 22 շաբաթական ժամկետը:

Կենդանածնություն է համարվում մոր օրգանիզմից պտղի լրիվ արտամղումը կամ դուրսբերումը անկախ հղիության ժամկետից, որը շնչում կամ կյանքի ցանկացած այլ նշաններ է ցուցաբերում:

Մեռելածնություն է համարվում մոր օրգանիզմից պտղի լրիվ արտամղումը կամ դուրսբերումը, որը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի այլ նշան, անկախ ծննդաբերության ժամկետից:

Ընտրովի աբորտ. բնորոշվում է որպես անցանկալի հղիության ընդհատման միջամտություն, որը

կատարվում է որևէ սպեցիֆիկ պատճառով, օրինակ՝ սեռով:

Ծննդաբերություն. կենդանի կամ մահացած պտղի լրիվ դուրսբերումը մորից, որի քաշը 500 գ-ից ավելի է, սկսած հղիության 22 շաբաթական ժամկետից:

Ցանկալի հղիություն. հղիություն, որը սպասված կամ պլանավորված է:

Մանկաբարձական անամնեզ. կնոջ կյանքում տեղի ունեցած հղիությունների, ծննդաբերությունների թվի, ընթացքի ու ելքերի պատմություն:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

S/S հարցման համար կիրառված հարցաթերթը (*Հավելված 2*) բաղկացած է 7 բաժնից, որոնցից առաջին երկուսում ներառված հարցերը հիմնականում վերաբերում են հարցված կնոջ և նրա ամուսնու/զուգընկերոջ սոցիալ-ժողովրդագրական նախապայմաններին և տ/տ հիմնական միջոցների ու հարմարությունների հասանելիությանը: Հաջորդ երկու բաժինների հարցերը վերաբերում են կնոջ հղիության պատմությանը, հղիությունների ժամանակահատվածներին և արդյունքներին: Առանձին մի բաժնի հարցերը վերաբերում են այն կանանց, որոնք նախապատվությունը տալիս են տղա, մեկ այլ բաժնի հարցերն էլ՝ աղջիկ երեխաներին: Վերջին բաժնի հարցերը վերաբերում են երեխայի սեռը որոշելու համար նախածննդյան փուլում անցկացված ստուգումներին և դրանց արդյունքներին:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՑՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ/ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ԿԱՆԱՆՑ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Հետազոտության ընդգրկած 2830 տնային տնտեսություններում 15-49 տարեկան կանանց թվաքանակը կազմել է 2925, որոնցից երբևէ հղիացած են եղել 1899 (64.9%): Նրանցից ամենաերիտասարդը եղել է 17, ամենատարեցը՝ 49 տարեկան, իսկ միջին տարիքը կազմել է 35.8 :

Աղյուսակ 1.1. Կանանց բաշխվածությունն ըստ առանձին տարիքային խմբերի

Տարիքային խմբեր	Թվաքանակ, մարդ	Տեսակարար կշիռ, %
15-19	12	0.7
20-24	171	9.0
25-29	326	17.2
30-34	336	17.7
35-39	347	18.3
40-44	260	13.7
45 և բարձր	448	23.6
Ընդամենը	**1899**	**100.0**

Բուժհաստատություններում հարցման է ենթարկվել 15-49 տարեկան 368 կին, որոնց միջին տարիքը կազմել է 29.6 տարի:

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ (ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ) ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ

Հարցված կանանց 42.4 %-ի կրթական մակարդակը ընդհանուր միջնակարգ է, 4.9%-ինը՝ հիմնական և ցածր, 29.9 %-ինը՝ նախնական մասնագիտական և միջնակարգ մասնագիտական, 22.9%-ինը՝ բարձրագույն և հետբուհական :

Գծապատկեր 1.1. Կանանց և նրանց ամուսինների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակների



Ընդ որում, բարձրագույն կրթություն ունեցող կանանց գերակշիռ մեծամասնությունը՝ 74.9 %-ն այդ մակարդակին հասել են 5-ամյա կրթության արդյունքում, այսինքն կյանքում ընդհանուր առմամբ ուսանելով 15 տարի, 16.8%-ը՝ քառամյա (ավարտել են բակալավրիատը), համապատասխանաբար ուսանելով 14 տարի, 4.4%-ը՝ վեցամյա (ավարտել են մագիստրատուրան), համապատասխանաբար ուսանել են 16 տարի, և 3.9%-ը՝ յոթնամյա կրթության արդյունքում, ուսանելով 17 տարի:

Նրանց ամուսինների/զուգընկերների գերակշիռ մեծամասնության՝44.5%-ի կրթական ամենաբարձր մակարդակը եղել է միջնակարգ կրթությունը, 21.8%-ինը՝ միջին մասնագիտական, 21.6%-ինը՝ բարձրագույն, 0.3%-ինը՝ հետբուհական կրթությունը, 8.2%-ի կրթական մակարդակը եղել է միջնակարգից ցածր:

ԿԱՆԱՆՑ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՂԻԱՆԱԼՈՒ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ

Ամուսնացած են եղել հարցված կանանց 89%-ը, ամուսնալուծված կամ այրիացած՝ նրանց 10%-ը:

Գծապատկեր 1.2. Հարցված կանանց բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի



Ամուսնության/համատեղ ապրելու միջին տարիքը կազմել է 20.9 տարի, ընդ որում նվազագույն տարիքը՝ 14, առավելագույնը՝ 40 տարի, իսկ հղիանալու միջին տարիքը՝ 21.6:

Աղյուսակ 1.2. Կանանց բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի, ամուսնության և հղիանալու միջին տարիքի

Տարիքը	Ամուսնության/համատեղ ապրելու տարիքը	Առաջին անգամ հղիանալու տարիքը
14-16	2.2	1.2
17-18	20.4	14.4
19-25	69.2	72.6
26-35	7.4	11.0
36 և ավելի	0.7	0.9
Ընդամենը	100.0	100.0

ԿԱՆԱՆՑ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Հարցված կանանց 92%-ն իրենց համարել են որևէ հավատքի հետևորդ, որոնց գերակշիռ մեծամասնությունը նշել է, որ հայ առաքելական եկեղեցու հետևորդ է, իսկ 8%-ը՝ իրենց որևէ հավատքի հետևորդ չեն համարել:

Աղյուսակ 1.3. Կանանց բաշխվածությունն ըստ կրոնական պատկանելության

	Թվաքանակ, մարդ	Տեսակարար կշիռ, %
Հայ առաքելական	1 689	88.9
Հայ կաթոլիկ	21	1.1
Հայ ավետարանչական	11	0.6
Շար-ֆադինական (եզդի)	11	0.6
Այլ	19	1
Ոչ	149	7.9
Ընդամենը	**1 899**	**100.0**

ԸՆՏԱՆԻՔՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄԻ և ՏԵՍԱԿԻ

Կանանց 43.7%-ն ապրում են նուկլեար ընտանիքներում, 44.5% -ը՝ ծնողների հետ համատեղ, և միայն 11.4%-ը ընդլայնված ընտանիքներում, այսինքն ծնողների և այլ բարեկամների հետ:

Գծապատկեր 1.3. Հարցվածների բաշխվածությունն ըստ ընտանիքների տիպի



Հետազոտության ընգրկած տնային տնտեսությունների անդամների միջին թվաքանակը կազմել է 4.99 մարդ, առավելագույն թվաքանակը՝ 16 մարդ, իսկ ընտանիքի անդամների միջին թվաքանակը կազմել է՝ 3.82, առավելագույն թվաքանակը՝ 8 մարդ:

Հարցված կանանց ընտանիքների ավելի քան մեկ չորրորդի եկամտի հիմնական աղբյուր է ծառայել պետական աշխատանքը, 18.1%-ինը՝ օրավարձու աշխատանքը, 17.5%-ինը՝ գյուղատնտեսությունը, 13.9%-ինը՝ արտերկրից դրամական փոխանցումները:

Գծապատկեր 1.4. Հարցվածների բաշխվածությունն ըստ եկամտի աղբյուրի



ԿՆՈՋ և ԱՄՈՒՄՆՈՒ/ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ, ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ և ՉԱՓԸ

Եթե հարցված կանանց 18.6%-ն է զբաղված եղել պետական աշխատանքով, ապա նրանց ամուսինների/զուգընկերների՝ ավելի քան մեկ հինգերորդը, գյուղատնտեսությունում զբաղված է եղել կանանց 18.8%-ը և նրանց ամուսինների/զուգընկերների 15.4%-ը: Օրավարձու աշխատանքով զբաղված են եղել ամուսինների/զուգընկերների 22.7%-ը, կանանց՝4.9%-ը:

Աղյուսակ 1.4. Կանանց և ամուսինների/զուգընկերների բաշխվածությունն ըստ նրանց հիմնական զբաղմունքի/եկամտի աղբյուրի

	Ամուսինների/զուգընկերների		Կանանց	
	Թվաքանակ, մարդ	տեսակարար կշիռ, %	թվաքանակ, մարդ	տեսակարար կշիռ, %
Գյուղատնտեսություն	292	15,4	356	18,8
Առևտուր (մեծածախ, այլ)	105	5,5	26	1,4
Սեփական գործ/բիզնես	95	5,0	20	1,1
Պետական աշխատանք	397	20,9	354	18,6
Օրավարձու աշխատանք	432	22,7	94	4,9
Դրամական փոխանցումներ արտերկրից	22	1,1	3	0,1
Վարձակալական վճարներ	97	5,1	156	8,2
Թոշակ/նպաստ	40	2,1	25	1,3
Այլ	266	14,0	824	43,4
Տնային տնտեսություն է վարում	-	-	41	2,2
Ընդամենը	1 746*	100,0*	1 899	100,0

**153 կին կամ հարցվածների 8,1%-ը ամուսինների/զուգընկերների զբաղմունքի վերաբերյալ հարցին չի պատասխանել:*

Հարցված կանանց կեսից ավելին (53,9%) նշել են, որ ամսական կայուն եկամուտ չեն ունեցել, 9.1%-ի միջին ամսական եկամուտը կազմել է 30000 դրամ և ավելի ցածր: 30001-50000 դրամ վաստակ են ունեցել կանանց 15.8%-ը, իսկ 50001-100000 դրամ՝ 16.6%-ը:

Աղյուսակ 1.5. Կանանց բաշխվածությունն ըստ միջին ամսական եկամտի

	Թվաքանակ, մարդ	Տեսակարար կշիռ, %
0	1,023	53.9
29999-ից ցածր	172	9.1
30000 – 50000	300	15.8
50001 – 100000	316	16.6
100001-ից բարձր	87	4.6
Ընդամենը	1,899	100.0

Սակայն հարցված կանանց 44.4%-ի կողմից նշվել է, որ որոշումներ իրենց վաստակած գումարների ծախսման վերաբերյալ նրանք ընդունել են ամուսինների/զուգընկերների հետ համատեղ, 20.5%-ը նշել է, որ որոշումն իրենք կայացրել են ինքնուրույն, 12.7%-ի դեպքում որոշումն ընդունել են ամուսինները, 7.3%-ի դեպքում՝ սկեսուրը:

Աղյուսակ 1.6. Կանանց մասնակցությունը ընտանիքում իրենց վաստակած դրամի ինչպես և ինչի վրա ծախսելու որոշումների կայացմանը

Որոշել է՝	Թվաքանակ, մարդ	Տեսակարար կշիռ, %
Ինքնուրույն	390	20,5
Ամուսինը/զուգընկերը	212	11,2
Ամուսինու/զուգընկերոջ հետ	842	44,4
Սկեսրայրը	72	3,8
Սկեսուրը	139	7,3
Այլ	242	12,7
Ընդամենը	**1 897**	**99,9**

Հետազոտության արդյունքներով պարզվել է, որ հարցմանը նախորդած ամսվա ընթացքում ընտանիքների մեծամասնության՝ 28.2%-ի միջին վաստակը կազմել է 50001-100000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հինգերորդ ընտանիքի՝ 21.2%-ի եկամուտը կազմել է 100001-150000 ՀՀ դրամ: Ընտանիքների ավելի քան մեկ քառորդի եկամուտը գերազանցել է 150000 ՀՀ դրամը, իսկ 7.7%-ինը ցածր է եղել 50000 ՀՀ դրամից:

Աղյուսակ 1.7. Ընտանիքների բաշխվածությունն ըստ միջին ամսական եկամտի (ՀՀ դրամ)

Ամսական եկամուտ	Թվաքանակ	Տեսակարար կշիռ, %	Միջին եկամուտ
30000 ցածր	26	1.4	24,377
30000-50000	119	6.3	43,946
50001-100000	536	28.2	80,996
100001-150000	402	21.2	134,746
150001-200000	293	15.4	190,380
200001-300000	169	8.9	265,472
300001 և բարձր	38	2.0	417,883
Ընդամենը	1899*	100	

** 316 կին կամ հարցվածների 16.6%-ը հարցին չի պատասխանել*

Հարցված կանանց ընտանիքներում վաստակած գումարների գերակշիռ մասը ծախսվել է սննդի վրա, որին հաջորդում են կոմունալ վճարումները և վարկի պարտքերի մարման նպատակով կատարված ծախսերը: Ընդ որում, սննդի վրա կատարված միջին ամսական ծախսերը կազմել են ընտանեկան միջին ծախսերի ավելի քան կեսը (52%):

Աղյուսակ 1.8. Միջին հաշվով ընտանիքում հարցմանը նախորդող ամսվա ընթացքում ծախսված գումարներն ըստ նշանակության (ՀՀ դրամ)

Ծախսերի տեսակ	Առավելագույնը	Միջինը
Մնունդ	1 000 000	67 524
Տրանսպորտ	240 000	8 548
Կրթություն	400 000	4 075
Հագուստ/կենցաղային ապրանքներ	200 000	13 760
Կոմունալ վճարումներ	200 000	15 146
Ջվարճություններ	100 000	4 063
Վարկ/պարտք	3 000 000	15 005
Այլ	400 000	2 275

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

Հարցված կանանց ավելի քան կեսը նշել է, որ ունեն հողատարածք, 39.2%-ն ունեցել է ավտոմեքենա, իսկ գյուղատնտեսական սարքավորումներ՝ տ/տ-ների միայն 3.4 %-ը: Առևտրի և ծառայությունների կետ ունենալու մասին նշվել է տ/տ-ների 3.2%-ի, իսկ արդյունաբերական տարածք՝ 0.3 %-ի կողմից: Տ/տ-ներում բջջային հեռախոս ունենալու մասին նշել են կանանց 97.9%-ը, իսկ ինտերնետը հասանելի է (համակարգչով կամ բջջային հեռախոսով) տ/տ-ների 46.8%-ի համար:

Գծապատկեր 1.5. Տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ հիմնական միջոցների և հարմարանքների հասանելիության



Հետազոտության համատեքստում կարևորվել է նաև, թե որքանով են կանայք հետաքրքրված հասարակական, քաղաքական, մշակութային կամ այլ նորություններով և տեղեկություններով, դրանց հասանելիության մակարդակը: Ուստի հարցաթերթում հարցեր են նախատեսվել ՝ պարզելու, թե այդ նպատակով նրանք օգտվում են ռադիո-հեռուստացույցից, ինտերնետի՞ց, թե՞ թերթ են կարդում, և ի՞նչ հաճախականությամբ:

Աղյուսակ 1.9. Տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ տեղեկատվական աղբյուրների հասանելիության

	Գրեթե ամեն օր	Երբեմն (շաբաթը 3-4 անգամ)	Հազվադեպ (շաբաթը 1-2 անգամ)	Երբեք	Ընդամենը
Որքա՞ն հաճախ եք ռադիո լսում	10.5	6.1	13.2	**70.1**	100
Որքա՞ն հաճախ եք դիտում հեռուստացույց	96.7	2.5	0.7	0.2	100
Որքա՞ն հաճախ եք թերթ կարդում	11.8	19.8	34.9	33.6	100
Որքա՞ն հաճախ եք կարդում ինտերնետային հաղորդագրություններ/լուրեր	13.4	10.2	12.6	63.7	100

Հարցված կանանց 70%-ը երբեք ռադիո չի լսում, իսկ 33.6%-ը՝ երբեք թերթ չի կարդում, 34.9%-ը թերթ կարդում է հազվադեպ: Գրեթե ամեն օր ինտերնետային հաղորդագրություններ կամ լուրեր է կարդում հարցված կանանց 13.4%-ը , 10.2%-ը՝ կարդում է երբեմն, իսկ 63.7%-ը երբեք չի կարդում ինտերնետային հաղորդագրություններ կամ լուրեր: Ամեն օր հեռուստացույց է դիտում կանանց 96.7%-ը :

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԱՆԱՄՆԵԶԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵԼՔԵՐԸ

Հարցման մասնակից 1899 կանանց ճնշող մեծամասնությունը՝ 1455 (76,6%), սեռական կյանքը սկսել է վերարտադրողական հասուն տարիքում, 17-18 տարեկանում՝ 20,4%-ը, անչափահասության շրջանում 14-16 տարեկանում՝ ընդամենը 2,2%-ը:

Հատկանշական է, որ ճնշող մեծամասնության՝ 1587 (83,6%), առաջին հղիությունը եղել է բարենպաստ վերարտադրողական՝ 19-35 տարեկան հասակում, փոքրաթիվ են դեռահաս տարիքում առաջին հղիություն ունեցողները. 17-18 և 14-16 տարեկանում՝ համապատասխանաբար 14,4% և 1,2%:

Հարցմանը մասնակցած կանանց բաշխվածությունն ըստ հղիությունների թվի ներկայացված է գծապատկեր 2.1-ում:

Հաշվի առնելով, որ 7-րդ և ավելի հղիությունները փոքր թիվ են կազմում և դրանով իսկ չեն ապահովում վիճակագրական տվյալների հավաստիություն, այսուհետ մանկաբարձական անամնեզի վերլուծությունը կվերաբերի միայն մինչև 7-րդ հղիությունների տվյալներին:

Գծապատկեր 2.1. Հարցված կանանց բաշխվածությունն ըստ հղիությունների թվի



Հարցվածների մանկաբարձական անամնեզի, հղիությունների ելքերի ուսումնա- սիրությունն ըստ հղիությունների կարգի (թե որերորդ հղիությունն է) ցույց տվեց, որ հղիությունների թվի մեծացմանը զուգընթաց առաջանում են որակական էական տարբերություններ:

Եթե առաջին հղիության դեպքում, հղիությունը ցանկալի է եղել 99,8%-ի համար, իսկ երկրորդ և երրորդ հղիության դեպքում՝ համապատասխանաբար 89,1% և 55,4%-ի համար, ապա 6-րդ հղիության դեպքում այդ ցուցանիշը նվազում է մոտ 6 անգամ՝ 16,8% (գծապատկեր 2.2):

Գծապատկեր 2.2. Ցանկալի հղիությունների բաշխվածությունն ըստ հղիությունների կարգի, %



Նմանատիպ օրինաչափություն է նկատվել հետագայում երեխա ունենալու ցանկության հարցի ուսումնասիրության ժամանակ. հղիությունների թվի բարձրացմանը զուգահեռ նվազում է հետագայում երեխա ունենալու ցանկությունը: Այսպես, եթե առաջին հղիության դեպքում հետագայում երեխա ունենալու մտադրության մասին նշել էին բոլոր հարցվածները, երկրորդ հղիության դեպքում՝ 90,1%-ը , ապա սկսած 3-րդ հղիությունից՝ հետագայում երեխա ցանկացողների թիվը նվազել է 68,8%-ից և 6-րդ հղիության դեպքում դարձել 19,8%:

Հղիության ելքերի վերաբերյալ ստացված տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ եթե առաջին և երկրորդ հղիությունները հիմնականում ավարտվել էին ծննդաբերությամբ՝ կենդանի պտղով (համապատասխանաբար 95,2 և 88,1%), ապա 5-րդ և 6-րդ հղիությունների դեպքում՝ ծննդաբերությունների թիվը կրճատվել է շուրջ 5 անգամ (համապատասխանաբար 20,6 և 16,8%):

Հղիության արհեստական ընդհատումների առումով արձանագրվել է աբորտների հաճախականության մեծացում հղիությունների կարգի բարձրացմանը զուգահեռ (գծապատկեր 2.3): Եթե առաջին և երկրորդ հղիությունների դեպքում այն կազմել է համապատասխանաբար 0. 3% և 5.6%, ապա 5-րդ և 6-րդի հղիությունների դեպքում աբորտով են ավարտվել հղիությունների համապատասխանաբար 73.3% և 81.4 %-ը:

Գծապատկեր 2.3. Հղիության ելքերի բաշխվածությունն ըստ հղիությունների կարգի, %



Հատուկ ուշադրության է արժանի սեռի նախապատվության ուսումնասիրությունը: Դատելով ստացված տվյալներից՝ անկախ հղիության կարգից, նույնիսկ առաջին հղիության դեպքում, մոտ 2.7 անգամ ավելի մեծ էր տղա երեխա ցանկացող կանանց թիվը աղջիկների համեմատությամբ (համապատասխանաբար 41.4 % և 15.5%),իսկ չեզոքություն էր արտահայտել երեխայի սեռի հանդեպ յուրաքանչյուր 2-րդ հարցված (43.1%):

Ուշագրավ է, որ երկրորդ հղիության ընթացքում չնայած նախապատվությունը կրկին տրվել է տղաներին, սակայն առաջինի համեմատությամբ աղջիկների նախապատվությունը մոտ 2 անգամ բարձրացել է՝ կազմելով 32.2%: Սա պայմանավորված է սեռի հանդեպ չեզոքություն արտահայտած կանանց թվի մոտ կրկնակի կրճատմամբ (21.4%), ինչպես նաև ընտանիքում հավանաբար արդեն իսկ տղա երեխաների առկայությամբ (գծապատկեր 2.4.):

Գծապատկեր 2.4. Սեռի նախապատվությունը հարցվածների շրջանում ըստ հղիությունների կարգի, %



Չնայած Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին հղիների՝ պետական պատվերի շրջանակներում 3-անգամ գերձայնային հետազոտություն անցնելու մասին որոշման, , գերձայնային հետազոտության են ենթարկվել առաջինից 5-րդ հղիությունների դեպքում ամեն երկրորդ հարցվածը և միայն 6-րդ հղիության դեպքում այն կազմել է 73.4% (գծապատկեր 2.5.):

Գծապատկեր 2.5. Գերձայնային հետազոտության հաճախականությունը ըստ հղիությունների կարգի, %



Վերլուծությունը ցույց տվեց, որ առաջին և երկրորդ երեխաների սեռերի հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար 1.03 և 1.02, այսինքն ծնվել են ծնելիության բնականոն գործընթացին բնորոշ հաճախականությամբ տղա և աղջիկ երեխաներ: Տղա/աղջիկ հարաբերակցության առանձնահատուկ անհավասարակշռություն է արձանագրվել երրորդ և հատկապես չորրորդ ծննդաբերությունից ծնված երեխաների սեռային պատկանելիության հարցում, ինչը գրեթե չի տարբերվում ՀՀ ԱՎԾ պաշտոնական վիճակագրությունից (գծապատկեր 2.6):

Գծապատկեր 2.6. Ծնված տղա/աղջիկ երեխաների բաշխվածությունն ըստ ծնունդների կարգի, %



5-րդ ծննդաբերությունից սկսած նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության աստիճանական նվազում (1.4), իսկ 6-րդի դեպքում՝ 1.2, ինչն անուղղակիորեն վկայում է բազմազավակ ընտանիքներում արդեն իսկ երկու սեռերի երեխաների առկայության դեպքում երեխայի սեռի նկատմամբ հատուկ նախընտրությունների բացակայության մասին:

Ուսումնասիրվել է նաև տղա/աղջիկ երեխաների բաշխվածությունը՝ կախված բնակավայրից (քաղաք/գյուղ) և մոր կրթական մակարդակից: Բացահայտվել է տղա/աղջիկ հարաբերակցության կախվածություն բնակավայրից (քաղաք/գյուղ) կրթական մակարդակից, (գծապատկեր 2.7 և 2.8):

Քաղաքաբնակ կանանց շրջանում սկսած 3-րդ ծննդաբերությունից նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության գործակցի բարձրացում, որն առավելագույն մեծության է հասնում 4-րդ ծննդաբերության դեպքում (3.3), այնուհետև նկատվում է ցուցանիշի նվազում: Գյուղական վայրերում 1-4-րդ ծննդաբերությունների դեպքում տղա/աղջիկ հարաբերակցությունը մոտ է բնականոն գործընթացի ցուցանիշներին (1.1և 1.0), նկատվում է որոշակի նվազում 3-րդ ծննդաբերության դեպքում (0.7) և փոքր ինչ բարձրացում 5-րդի դեպքում (1.3):

Գծապատկեր 2.7. Երեխաների սեռի կախվածությունը ծննդաբերությունների կարգից և բնակավայրից (քաղաք/գյուղ)



Ինչ վերաբերում է **երեխաների սեռի տղա/աղջիկ բաշխվածության տվյալներին** ըստ հարցվածների կրթական մակարդակի, ապա բարձրագույն կրթությամբ կանանց մոտ 2-ից 5-րդ ծնունդաբերության դեպքում նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության բարձրացում (1.2-1.6)՝ աննախադեպ մեծության հասնելով 5-րդ ծնունդաբերության դեպքում (3.2): Սկսած երկրորդ ծնունդաբերությունից՝ բարձրագույն կրթությամբ կանանց մոտ տղա/աղջիկ հարաբերակցության ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվում, քան տարրական/հիմնական կրթություն ունեցողների մոտ (գծապատկեր 2.8):

Գծապատկեր 2.8. Երեխաների սեռի կախվածությունը ծնունդաբերությունների կարգից և կրթական (հիմնական, բարձրագույն) մակարդակից



Ընտանիքում առկա եկամտի տեսանկյունից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ ուղիղ կապ ընտանիքի եկամտի չափի և ծնված երեխաների սեռերի հարաբերակցության միջև չկա:

Որոշակի կախվածություն է նկատվել կանանց եկամուտների և տղաների գերակշռության միջև, մասնավորապես, ցածր եկամուտ ունեցող կանանց համեմատությամբ, 100000 դրամ և ավելի եկամուտ ունեցողների մոտ արդեն իսկ 1-ին և 2-րդ երեխաների պարագայում հարաբերակցությունը համապատասխանաբար կազմում է 1.22 և 1.33, իսկ 4-րդ և 5-րդի դեպքում ակնհայտ է դառնում տղաների աննախադեպ գերակշռությունը՝ կազմելով համապատասխանաբար 8.2 և 7.6 (գծապատկեր 2.9):

Գծապատկեր 2.9. Երեխաների սեռի կախվածությունը կնոջ և ընտանիքի եկամուտներից



ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քանակական հարցման մեջ ընդգրկված 1899 կանանց ճնշող մեծամասնությունը՝ 1742 (91.7%) նշել են, որ տեղյակ են նախածննդյան փուլում պտղի սեռի որոշման հնարավորության մասին:

Այն հարցին, թե ախտորոշման ինչպիսի մեթոդների մասին կարող են նշել, հարցվածների 88.9%-ը նշել է գերձայնային հետազոտության, 1.5%-ը՝ ամնիոցենտեզի, 15.9%-ը՝ ավանդական մեթոդների մասին:

Հատկանշական է, որ ախտորոշման այդ մեթոդների ինֆորմացիայի աղբյուրի մասին հարցին պատասխանած 1742 կանանցից միայն 45.2%-ի համար են ինֆորմացիայի աղբյուր եղել բուժհիմնարկները: Մնացած 54.8%-ը ինֆորմացիան ստացել է տարբեր աղբյուրներից, մասնավորապես՝ ընկերներից (36.8%), ծնողներից (10.0%), ԶԼՄ-ներից (4.7%): Փոքր թիվ են կազմում այն կանայք, ովքեր որպես ինֆորմացիայի աղբյուր նշել են սկեսրոջը (2.3%) և ամուսնուն (0.8%):

Համարյա բոլոր հարցվածները բավարար չափով իրազեկված էին տվյալ մեթոդով հետազոտման վայրի մասին: Հարցվածների 34.3%-ը նշել է պոլիկլինիկան, 32.5%-ը՝ գերձայնային ախտորոշման ծառայությունները, 28.1%-ը՝ ծննդատունը, 5.2%-ը՝ պտղի սեռը որոշելու այլ վայրեր:

Նախածննդյան փուլում երեխայի սեռը որոշելու վայրի մատչելիության վերաբերյալ հարցին ի պատասխան կանանց մեծամասնությունը (66.9%) հետազոտման վայրը համարել է մատչելի, անմատչելի են համարել 7.4%-ը, այդ մասին ինֆորմացիա չի ունեցել յուրաքանչյուր չորրորդ հարցվածը (25.7%):

Չնայած բարձր իրազեկմանը, վերջին 5 տարիների ընթացքում նախածննդյան փուլում երեխայի սեռը որոշելու մեթոդից օգտվել էր 420 կին (22,1%), մեթոդից չէր օգտվել հարցվածների ճնշող մեծամասնությունը (77.9%):

Երեխայի սեռը որոշելու նպատակով կանանց 38.4%-ը դիմել է պոլիկլինիկա, 29%-ը՝ գերձայնային ախտորոշման ծառայություն, 27.9%-ը ծննդատուն: Փոքր թիվ էին կազմում ախտորոշման կենտրոն կամ այլ վայր դիմած կանայք, համապատասխանաբար 2.9% և 1.8% (գծապատկեր 2.10):

Գծապատկեր 2.10. Նախածննդյան փուլում երեխայի սեռը որոշելու համար կանանց բաշխվածությունն ըստ հետազոտման վայրի



Սեփական անձին և առողջությանը վերաբերող հարցերում որոշման կայացմանն առնչվող տվյալների վերլուծությունը հուսադրող է այն առումով, որ հետազոտության դիմած կանանց ճնշող մեծամասնությունը (68.4%) այդ քայլն արել է սեփական որոշմամբ ու նախաձեռնությամբ: Համարյա հավասար հաճախականությամբ կնոջը հետազոտության են ուղղորդել ամուսինը/զուգընկերը (11.6%), սկեսուրը (9.7%), մայրը (8.1%) (գծապատկեր 2.11):

Գծապատկեր 2.11. Նախածննդյան փուլում երեխայի սեռի որոշում կայացնող անձը



Համաձայն ուսումնասիրության տվյալների՝ հղիության ժամկետը, որի ընթացքում կատարվել է գերձայնային հետազոտություն սեռը որոշելու նպատակով, տատանվել է շատ մեծ սահմաններում՝ 2-36 շաբաթ, կազմելով միջինը 14.93 շաբաթ: Ի դեպ, պտղի սեռի որոշման ամենավաղ ժամկետը 13-14 շաբաթական հղիության շրջանն է: **Հետազոտության արդյունքներով՝ սեռը որոշելու համար հետազոտված** յուրաքանչյուր երկրորդ հղիի մոտ (48.5%) հայտնաբերվել է տղա, 38.8%-ի դեպքում՝ աղջիկ, 53-ի (12.7%) մոտ սեռը հստակ պարզել չի հաջողվել:

Պտղի սեռը պարզելուց հետո էական տարբերություններ հղիների և նրանց ամուսինների կողմից հղիության շարունակման հարցում չի արձանագրվել:

Կանանց և նրանց ամուսինների/զուգընկերների ճնշող մեծամասնությունը համապատասխանաբար 95.5% և 90.8% ցանկացել են ունենալ տվյալ սեռի երեխա, չեն ցանկացել ունենալ միայն կանանց 3.6%-ը

և տղամարդկանց 4.2%, իսկ համապատասխանաբար 0,9%-ը և 5.0%-ը չեն կողմնորոշվել (գծապատկեր 2.12):

Գծապատկեր 2.12. Կանանց և նրանց ամուսինների որոշումը պտղի սեռը որոշելուց հետո



Ընտանիքի որոշումը ավելի մոտ է եղել ամուսինների/զուգընկերների կարծիքին: Ընտանիքը 333 (90.9%) դեպքերում ցանկացել է ունենալ տվյալ սեռի երեխա, 13 (3.4%)- չեն ցանկացել, իսկ 18 (5.0%)-չեն կողմնորոշվել այդ հարցում:

ՀՂԻՈՒԹՅԱՆԸ ԵԼՔԸ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԸ ՈՐՈՇԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Երեխայի սեռը որոշելուց հետո 420 կանանց ճնշող մեծամասնությունը՝ 397 (94.5%), շարունակել է հղիությունը, իսկ 23-ը (5.5%) դիմել է հղիության արհեստական ընդհատման (գծապատկեր 2.13): Այսպիսով, հետազոտության տվյալները վկայում են, որ 2830 տնային տնտեսություններում հայտնաբերված 2925 վերարտադրողական տարիքի (15-49) կանանց 0.8 %-ը (23) վերջին 5 տարիների ընթացքում ընդհատել են հղիությունը՝ պայմանավորված պտղի սեռի անցանկանալի լինելու հանգամանքով: Քանի որ հետազոտության տվյալները ներկայացուցչական են հանրապետության կտրվածքով, դա հիմք է տալիս ենթադրելու, որ Հայաստանի մոտ 900. 000 վերարտադրողական տարիքի կանանց 0.8%-ը վերջին 5 տարիների ընթացքում կատարել են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում:

Գծապատկեր 2.13. Նախածննդյան փուլում երեխայի սեռը որոշելուց հետո հղիության ելքը



Հղիության ընդհատման որոշում կայացրած 23 կանանցից 19-ը (82.6%) որոշումը կայացրել է ինքնուրույն: Ամուսնու/զուգընկերոջ կողմից որոշումը կայացվել է 18.4%-ի դեպքում:

Հղիության ընդհատման վայրի վերլուծությունը ցույց տվեց, որ հղիության արհեստական ընդհատման դիմած կանանց ճնշող մեծամասնությունը (83.7%) հղիությունը ընդհատել է ծննդատանը: Անհանգստացնող է, որ 4 կին հղիությունը ընդհատել է դեղորայքային աբորտի միջոցով տանը, առանց բժիշկների մասնակցության:

Ցածր էր կանանց իրազեկվածությունը Հայաստանում հղիության ընդհատման օրենսդրական թույլատրության մասին: Հարցված 1899 կանանցից իրազեկված էր ընդամենը 57.4%-ը: Ամեն երրորդ հարցված՝ 675 (35.5%), չի ունեցել ինֆորմացիա, իսկ 133-ը (7.0%) կարծիք են հայտնել, որ աբորտը Հայաստանում օրինական չէ (գծապատկեր 2.14):

Գծապատկեր 2.14. Հարցված կանանց իրազեկվածությունը աբորտների կատարման օրինականության վերաբերյալ



Ծնված երեխաներից 1804-ը (99.8%) հարցման պահին կենդանի էին, 4-ը ոչ (0.2%) հարցման պահին կենդանի չէր: Երեխաների միջին տարիքը կազմում էր 13.78, իսկ առավելագույնը՝ 32 տարի:

Ինչպես ցույց է տալիս ստացված տվյալների վերլուծությունը, չնայած հարցվածների ընտանիքներում տղա երեխաների մոտ 6 անգամ ավելի մեծ նախապատվությանը, այնուամենայնիվ ծնվելուց հետո աղջիկ երեխաների նկատմամբ առկա է հավասար վերաբերմունք ու խնամք. Դա են փաստում ծնված երեխաների կենդանի լինելու և նրանց տարիքի մասին տվյալները աղջիկ/տղա կտրվածքով (աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1. Կենդանի երեխաների միջին տարիքը ըստ ծննդաբերությունների թվի

Ծննդաբերություն	Կենդանի տղա երեխաներ, %	Կենդանի աղջիկ երեխաներ, %	Տղա երեխաների միջին տարիքը	Աղջիկ երեխաների միջին տարիքը
I	99.8	99.9	13.7	14.2
II	99.2	99.4	13.5	13.6
III	98.9	99.1	13.1	13.2
IV	98.5	98.7	12.7	12.9
V	96.3	97.6	12,4	12.7
VI	95.5	96.9	9.5	9.9

ԳԼՈՒԽ 3. ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԴԻՄԱԾ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հղիության արհեստական ընդհատման նպատակով բուժհաստատություններ **դիմած կանանց շրջանում** հղիության արհեստական ընդհատման պատճառների, այդ թվում սեռով պայմանավորված, աբորտի դիմելու որոշման կայացման, մանկաբարձական անամնեզի առանձնահատկությունների, ընտանիքում տղա/աղջիկ երեխաների առկայության, վերարտադրողական վարքագծի ուսումնասիրման նպատակով քանակական հարցման են ենթարկվել հանրապետության բոլոր մարզերի և Երևանի քաղաքի ծննդօգնության հիմնարկներ հղիության արհեստական ընդհատման նպատակով 2011թ. հուլիս-օգոստոս ամիսներին դիմած կանայք, ովքեր համաձայնել են մասնակցել հարցմանը (*Հավելված 3*):

Ուսումնասիրության մեջ ընդգրկվել են 368 կին, որոնց միջին տարիքը կազմել է 29,6 տարի:

Համաձայն Հայաստանում ժողովրդագրական առողջապահական հետազոտության տվյալների (ՀԺԱՀ, 2010թ.)՝ ծննդաբերությունների առավելագույն թվաքանակը արձանագրվում է 20-25 տարիքային խմբում, իսկ աբորտները՝ 25-29 տարեկանում: Այն նշում է, որ Հայաստանում կանայք սովորաբար դիմում են աբորտի 1 կամ 2 երեխա ունենալուց հետո: Այդ առումով նույնն է վկայում նաև սույն հետազոտությունը:

29.6 տարի	Հետազոտվածների միջին տարիքը
20-25 տարեկան	Ծննդաբերությունների առավելագույն տարիքային միջակայքը
25-29 տարեկան	Աբորտի դիմած կանանց առավելագույն տարիքային միջակայքը

Աբորտի դիմած կանանց բաշխվածությունն ըստ բնակության վայրի ներկայացված է աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1. Աբորտի դիմած կանանց բաշխվածությունն ըստ բնակության վայրի

Բնակավայրի անվանումը	Աբորտի դիմած կանանց թիվը	Տեսակարար կշիռ, %
Երևան	129	35,1
Արագածոտն	9	2,4
Արարատ	22	5,9
Արմավիր	24	6,5
Գեղարքունիք	29	7,9
Լոռի	41	11,1
Կոտայք	31	8,4
Շիրակ	38	10,3
Սյունիք	21	5,7
Վայոց ձոր	9	2,4
Տավուշ	15	4.1
Ընդամենը	**368**	**100**

Հետազոտվածների մանկաբարձական անամնեզի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընդամենը 19 հարցված (5,2%) էր ունեցել մեկ հղիություն:

Ճնշող մեծամասնությունը՝ 176 (47.8%), ունեցել էին 4 և ավելի հղիություն, 2 և 3 հղիություն ունեին համապատասխանաբար 17.4% և 28.8%-ը, ընդամենը 3 կին չէր ունեցել հղիություն (գծապատկեր 3.1):

Գծապատկեր 3.1. Հղիությունների թիվը աբորտի դիմած կանանց շրջանում



Նախկինում կատարված աբորտների վերաբերյալ տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ հարցման մասնակցած յուրաքանչյուր 5-րդ հղին չի ունեցել հղիության արհեստական ընդհատում:

Ընդհանուր առմամբ աբորտների հաճախականությունը ըստ աբորտների թվաքանակի ցուցաբերում է նվազման միտում. այսպես, եթե 1 աբորտ անամնեզում նշել էր յուրաքանչյուր 3-րդ կինը (36.1%), 2 աբորտ՝ 98-ը (26.6%), 3 աբորտ՝ 32-ը (8.7%), ապա 4 և ավելի՝ ընդամենը 37-ը (10.1%) (գծապատկեր 3.2):

Գծապատկեր 3.2.Աբորտների հաճախականությունը հարցվածների շրջանում, %



Աբորտի դիմած կանանց երեխաների տղա /աղջիկ հարաբերակցության ուսումնասիրությունը առաջին ծննդաբերության ժամանակ ցույց տվեց, որ երեխաների տղա/աղջիկ հարաբերակցությունը մոտ է բնականին՝ 1.04 (51% և 49%), իսկ վերջին ծննդաբերությունից ծնված երեխաների շրջանում փոքր-ինչ գերակշռում էին տղաները՝ 51.7% 48.3 %-ի փոխարեն, սակայն հարաբերակցությունը՝ 1.07, կրկին մոտ էր բնականին

Նախորդ հղիությունների ելքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հղիությունների կեսից ավելին (54.2%) ավարտվել է ծննդաբերությամբ, ամեն 10-րդ կնոջ մոտ՝ ինքնաբեր վիժումով, իսկ (36.2%)-ի մոտ՝ հղիության արհեստական ընդհատումով (գծապատկեր 3.3):

Գծապատկեր 3.3. Հղիության ելքերը նախորդ հղիությունների դեպքում



Հղիության ընդհատման պատճառների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնական դեպքերի 46.2% -ը կապված էր հղիության անցանկալի ու չպլանավորված լինելու հետ:

Այնուամենայնիվ, փոքր թիվ չէին կազմում սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները, ինչն արձանագրվել է յուրաքանչյուր 3-րդ հարցվածի մոտ (39.1%):

Բժշկական ցուցումներով հղիությունը ընդհատվել էր 27 կնոջ (7.3%) մոտ, ինչը փաստում է հղիների ոչ բարվոք առողջական վիճակի մասին:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման համար ծննդօգնության ստացիոնար բուժհիմնարկ էին դիմել 17 (4.6 %) կին:

Ուշագրավ է, որ ընտանիքում տարբեր սեռի երեխաների քանակը որոշելու ամենամեծ իրավասությամբ օժտված էին կանայք: Բավական է նշել, **որ** այդ հարցին պատասխանած 17 կանանց տվյալների համաձայն, տարբեր սեռերի երեխաներ ունենալու հարցը 29.4%-ի դեպքերում որոշվել է կնոջ կողմից միանձնյա, 41.2%-ի դեպքում կինը որոշել է ամուսնու /զուգընկերոջ հետ, վերջիններիս կողմից որոշում է կայացվել միայն 29.4% դեպքում, ինչը վկայում է ընտանիքում որոշում կայացնելու կանանց բարձր իրավասության մասին (70,6%) (գծապատկեր 3.4):

Գծապատկեր 3.4. Ընտանիքում տարբեր սեռերի երեխաների քանակի վերաբերյալ որոշում կայացնող անձը



Ընտանիքում տղա կամ աղջիկ երեխաների նախապատվությանը վերաբերող հարցին պատասխանած կանանց տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ընտանիքներում 6 անգամ ավելի հաճախ նախապատվությունը տրվում է տղաներին՝ աղջիկների համեմատությամբ (համապատասխանաբար 64.7% և 11.8%) և միայն հարցվածների 23.5%-ն էր նշել չեզոքություն սեռի հարցում (գծապատկեր 3.5)

Գծապատկեր 3.5. Տարբեր սեռերի երեխաների նախապատվությունը ընտանիքում



Ընտանիքում տղաներին տրվող նախապատվության պատճառներին վերաբերող հարցին պատասխանել էին աբորտի դիմած սակավաթիվ կանայք, ընդամենը 11 կին, որոնց 6-ի (54.5%) կարծիքով դա պայմանավորված է տղաների՝ տոհմը շարունակելու, իսկ 5 (45.5%)-ի կարծիքով՝ ունեցվածքի ժառանգորդ լինելու հանգամանքով:

Հաջորդ հարցը վերաբերում էր ներկա հղիության ընդհատման որոշումը կայացնող անձի մասին, որին պատասխանած 17 կանանց տվյալների համաձայն՝ ներկա հղիության ընդհատման որոշումը կայացվել է հավասարապես 8-ական դեպքերում (47.1%) կնոջ ու ամուսնու կողմից և միայն մեկ դեպքում (5.9%)՝ սկեսուրի կողմից (գծապատկեր 3.6):

Գծապատկեր 3.6. Ներկա հղիության ընդհատման որոշում կայացնողները



Հաջորդ երեխայի անպատճառ տղա լինելու կապակցությամբ կնոջ վրա ճնշման և այն գործադրող անձի մասին հարցին ճնշող մեծամասնությունը 88.2%-ը պատասխանել է, որ որևէ ճնշում չի եղել, և միայն 2 կին (11.8%) նշել են այդ պիսի ճնշման մասին՝ մեկի դեպքում ամուսնու՝ և մյուսի դեպքում սկեսուրի կողմից:

ԳԼՈՒԽ 4. ՍԵՌԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Ընդհանուր առմամբ քանակական հարցման մասնակիցները փաստում են, որ թե՛ իրենց շրջապատում և թե՛ ընտանիքում տարբերակված մոտեցում կա երեխայի սեռի նախապատվության հարցում:

Գծապատկեր 3.1. Ձեր շրջապատում/ընտանիքում նախապատվությունն ավելի շատ տրվում է տղաների՞ն, թե՞ աղջիկներին



Համաձայն հարցման արդյունքների՝ կանանց շրջապատում տղաներին նախապատվություն տվող մարդկանց թիվը (59.3%) մոտ տասն անգամ ավելի է աղջիկներին նախապատվություն տվող մարդկանց թվից (5.6%): Հարցվածների 35.1%-ը նշում է, որ իր շրջապատի մարդկանց համար երեխայի սեռը նշանակություն չունի (գծապատկեր 3.1):

Գյուղական բնակավայրերում հարցված կանանց մեծամասնության (70.4%) կարծիքով իրենց շրջապատում նախապատվությունը տրվում է տղաներին և միայն 1.6%-ն է գտնում, որ նախապատվությունը տրվում է աղջիկներին (28%-ի կարծիքով շրջապատի համար երեխայի սեռը նշանակություն չունի): Քաղաքային բնակավայրերում պատկերը հետևյալն է. հարցվածների 50.5%-ի կարծիքով իրենց շրջապատի մարդիկ նախապատվությունը տալիս են տղաներին, իսկ 8.8%-ի կարծիքով՝ աղջիկներին:

Հաջորդ հարցը վերաբերում էր նախապատվություններին ընտանիքի ներսում, և այստեղ նորից գերակշռում են տղա երեխաներին նախապատվություն տվող պատասխանները: Ընդհանուր առմամբ, տղա երեխաներին նախապատվություն տվող ընտանիքները մոտ վեց անգամ ավելի են, քան աղջիկներին նախապատվություն տվող ընտանիքները (համապատասխանաբար 43.8% և 7.6%), գյուղական բնակավայրերում տարբերությունը տասնապատկվում է (համապատասխանաբար 51.8% և 4.5%), իսկ քաղաքային բնակավայրերի պարագայում տարբերությունը մոտ քառակի է (համապատասխանաբար 37.6% և 10%):

Ընտանիքի ներսում երեխայի սեռի նախապատվությունները ըստ մարզային բաշխման ներկայացված են գծապատկեր 3.2-ում:

Գծապատկեր 3.2. Ձեր ընտանիքում ավելի շատ նախապատվությունը տրվում է տղաներին, թե աղջիկներին



Քանակական հարցմանը մասնակից կանանց 41.4 %-ը նշել են, որ առաջին հղիության ժամանակ ցանկանում էին տղա ունենալ, և միայն ամեն յոթերորդ (15.5%) հարցվողն է նշել, որ ցանկանում էր աղջիկ երեխա ունենալ: Հատկանշական է, որ առաջին հղիության դեպքում հարցվողների մոտ կեսի (43.1%) համար երեխայի սեռը նշանակություն չի ունեցել (գծապատկեր 3.5):

Նշանակալի տարբերություններ կան գյուղական և քաղաքային բնակավայրերում հարցված կանանց նախապատվություններում: Քաղաքային բնակավայրերում մոտ երեք անգամ ավելի շատ են աղջիկ երեխաներին նախապատվություն տվող հարցվողները (քաղաք՝ 20.3%, գյուղ՝ 7.3%): Տղաների դեպքում պատասխանները տարբերվում են միայն 1.9 տոկոսային կետով (քաղաք՝40.6%, գյուղ՝42.5%) (գծապատկեր 3.3):

Գծապատկեր 3.3 Ի՞նչ էիք ցանկանում ունենալ առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա



Տվյալների վերլուծությունը մարզային կտրվածքով նույնպես վկայում է բոլոր մարզերում տղաների նկատմամբ հստակ նախապատվություն արտահայտող դիրքորոշման մասին: Տղաներին հարաբերականորեն շատ է նախապատվություն տրվում է Լոռու (93.7%), Տավուշի (50.7%), Շիրակի (46.2%) և Գեղարքունիքի (45.6%) մարզերում: Հարաբերականորեն հավասար վերաբերմունք կա առաջին երեխայի սեռի առումով Արագածոտնի (82.4%), Արարատի (71.3%) և Սյունիքի (69.6%) մարզերում, որտեղ հարցվածների

ճնշող մեծամասնությունը նշել է, որ առաջին հղիության ժամանակ երեխայի սեռը նշանակություն չի ունեցել իրենց համար (գծապատկեր 3.4):

Գծապատկեր 3.4. Ի՞նչ էիք ցանկանում ունենալ առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա



Առաջին հղիության ընթացքում ամուսինների/զուգընկերների մեծամասնությունը (59.7%) ցանկացել էր ունենալ տղա երեխա (տարբերությունը տղա երեխա ցանկացող կանանց և նրանց ամուսինների միջև կազմում է 18.2 տոկոսային կետ), իսկ աղջիկ երեխա ցանկացել են ունենալ վերջիններիս միայն 6.8%-ը: Յուրաքանչյուր երրորդ (31.7%) կնոջ ամուսնու/զուգընկերոջ համար երեխայի սեռը նշանակություն չի ունեցել:

Համաձայն քանակական հարցմանը մասնակցած կանանց՝ նրանց սկեսուրների և մայրերի չնչին տոկոսն է ցանկացել առաջին հղիության ընթացքում աղջիկ թոռ ունենալ (համապատասխանաբար 4.7% և 4.8%): Տղա թոռ ցանկացել է ունենալ սկեսուրների 40.5%-ը և մայրերի 22.2%-ը: Երեխայի սեռը նշանակություն չի ունեցել սկեսուրների 45.1%-ի և մայրերի 67.3%-ի համար (գծապատկեր 3.5):

Գծապատկեր 3.5. Ի՞նչ էիք ցանկանում ունենալ առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա



Հատկանշական է, որ համաձայն իրականացված վիճակագրական տեստի (t-test) հարցվողների կրթամակարդակը և տեղեկացվածության աստիճանը էական ազդեցություն չեն ունենում նախապատվությունների հարցում[1]:

ՏՂԱՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ֆոկուս-խմբերի և խորացված հարցազրույցների մասնակիցները գտնում են, որ ներկայումս հասարակության մեջ ավելի է արժևորվում տղա երեխան: Հարցազրույցների մասնակիցները տղա երեխայի նկատմամբ առկա ընդգծված նախապատվությունը համարում են զուտ հայկական մտածելակերպի արդյունք, սակայն մասնակիցների որոշ մասի կարծիքով երեխայի սեռի նկատմամբ նման տարբերակված վերաբերմունքը հասարակության մեջ արդարացված չէ: Ստորև բերված մեջբերումը իրավիճակի դիպուկ նկարագրություն է.

-Երևույթը, որպես այդպիսին գոյություն ունի մեր հասարակության մեջ, չգիտեմ ինչու: Ես անձամբ համաձայն չեմ այդ մտքի հետ, համաձայն չեմ, որ պետք է արժևորվի տղա երեխան, որովհետև ես նկատել եմ, որ մեզ մոտ նույնիսկ ֆանատիզմի է հասնում տղա երեխայի «երևույթը» ու շատ անգամ, ես նույնիսկ կասեմ ավելին, շատ անգամ ընտանիք կազմելու նպատակը առհասարակ երեխա ունենալու հետ է կապվում ու հենց արու զավակ ունենալու հետ, որն իմ կարծիքով չափազանց խորը և ստերեոտիպային է, որը պետք է վերանայել:

(Խառը խումբ՝ կանայք/տղամարդիկ)

Թեև ֆոկուս-խմբերի մասնակիցներից շատերը փաստում են, որ տղաների նկատմամբ ընդգծված նախընտրությունները ժամանակի ընթացքում հետզհետե ավելի քիչ են արտահայտվում, այնուամենայնիվ բոլոր ֆոկուս-խմբերի և խորացված հարցազրույցների մասնակիցները միանշանակ կարևորում են տղա երեխայի ժառանգ լինելու հանգամանքը՝ անկախ ընթացիկ փոփոխություններից:

- Ինձ համար կարևոր չէ առաջինը տղա կլինի թե աղջիկ, քո զավակն է ու պետք է նույն ձևով սիրես: Պարզապես, ինչպես որ ասացին, տղան տոհմի շարունակող է, իսկ մնացած առումներով՝ աղջիկ կա, որ իսկապես հազար տղա արժե:

(Տղամարդկանց խումբ)

- Հայ ընտանիքներում տղամարդու խոսքն ավելի ազդեցիկ է կնոջ մոտ, տղամարդն էլ ուզում ա տղա, դրա համար կինն էլ ա ուզում, որ տղա լինի՝ ելնելով նրանից, որ տղամարդն ա ուզում: Տղամարդու ասածը գերակշռում ա ընտանիքի մեջ:

(Տղամարդկանց խումբ)

- Ես ինքս այն կարծիքին չեմ, որ ավելի կարևոր է ունենալ տղա երեխա, քան աղջիկ երեխա, բայց բոլոր ընտանիքներում ավելի արժևորվում ու ոգևորում է տղայի ծնունդը: Դա կապված է նրա հետ, որ սերունդը շարունակվի տվյալ ազգի համար, որպես ազգը շարունակող:

(1-ին խորացված հարցազրույց,
35 տարեկան, բարձրագույն կրթություն)

Հարցազրույցների ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տղաների նկատմամբ նախընտրությունը հիմնականում պայմանավորված է տվյալ տոհմի շարունակման անհրաժեշտությամբ, ընտանիքում տղամարդու ազդեցիկ դիրքով, հասարակության մեջ տղաների շատ ավելի ակտիվ դերակատարությամբ և սոցիալական մոբիլությամբ:

Ֆոկուս -խմբերի և խորացված հարցազրույցների մասնակիցներին հարց էր տրվել ՝ արդյո՞ք նրանք

[1] Կրթամակարդակի և տղաների նախապատվության կոռելյացիայի գործակիցը դրական է, ինչը նշանակում է, որ ինչքան տարիների թիվը մեծ է, այնքան նախապատվությունը տրվում է տղային, բայց դա շատ թույլ կապ է: Աղջիկ և տղա ցանկացողների տարիքի միջին ցուցանիշները շատ մոտ են իրար: -test (1.846)< t կրիտիկականից (1.960) նշանակում է, որ ընդունվում է զրոյական հիպոթեզը, այսինքն կոռելյացիայի գործակիցը=0. Sig. (2-tailed) 0.065>0.05 նշանակում է, որ կոռելյացիայի գործակիցը=0՝ նշանակալի չէ:

համաձայն են, որ հայկական ընտանիքներում աղջիկն ավելի քիչ է կարևորվում: Հարցազրույցների ընթացքում հնչած պատասխանները հետաքրքիր են նրանով, որ որևէ կերպ չի ընդգծվում ընտանիքում աղջկա դերի պակաս կարևոր լինելու հանգամանքը:

-Ընդհանրապես, եթե ընտանիքում կա մեկ երեխա, կապ չունի՝ աղջիկ է, թե տղա, այդ երեխան լինում է կենտրոնում,- կարծում է տղամարդկանց ֆոկուս-խմբի մասնակիցներից մեկը: -Բոլոր ուժերն ու նվիրվածությունը գնում է այդ մի հոգուն: Այսինքն՝ կախված է նրանից, թե ընտանիքում քանի երեխա կա: Դա լրիվ փոխում է իրավիճակը: Չի կարող լինել այնպիսի դեպք, որ ընտանիքում կա մեկ աղջիկ ու ինքն անտարբերության է մատնվել: Չի կարող այդպես լինել:

Խորացված հարցազրույցների մասնակից կանանց առաջարկվել է իրենց օրինակով բացատրել խնդրի էությունը:

-Իմ դեպքում, ես նպատակ չունեի հղիանալ, ու քանի որ ընտանիքում կար ցանկություն տղա երեխա ունենալու, երկրորդը որ աղջիկ եղավ, մտածեցի ընդհատեմ հղիությունը, երրորդը տղայի ակնկալիքով: Երկրորդն ընդհատեցի զուտ դրա համար: Երրորդը արդեն չեմ ընդհատի, չնայած, որ էլի աղջիկ է: Դա ընտանիքում որոշեցինք: Ես չեմ կարծում, որ աղջիկները կարևոր չեն, որովհետև ես ունեմ մի աղջիկ: Ճիշտ է, երկրորդն ընդհատեցի սեռի համար, հիմա էլի պատրաստվում եմ երեխա ունենալ, որ նույնպես աղջիկ է: Ինձ համար ես աղջկան ավելի եմ կարևորում, քան տղային՝ ծնողի, հատկապես մոր համար:

(1-ին խորացված հարցազրույց,
35 տարեկան, բարձրագույն կրթություն)

-Ունեմ երկու տղա երեխա, առաջինը իմացանք, որ աղջիկ պետք ա լինի, ես դիմել եմ արհեստական ընդհատման: Երկրորդն ունեցել եմ տղա երեխա և էլ չէի ուզում երեխա ունենալ, առողջական խնդիրներ կային: Բայց եթե ինձ բախտ վիճակվեր, որ նորից երեխա ունենայի, ես էլի տղա կուզենայի: Համաձայն չեմ այն մտքի հետ, որ հասարակության մեջ աղջիկը ավելի քիչ է կարևորվում, յուրաքանչյուր մարդ յուրովի ա դատում, յուրաքանչյուր մարդ անհատական ա, նայած՝ ով ինչպես ա մտածում, էդ հարցին մոտենում: Ես, օրինակ, արժևորում եմ տղա երեխային: Ես պարզապես սիրում եմ տղա երեխա. ես ռոմանտիկ մարդ եմ, մտածում եմ, որ եթե աղջիկը ինչ-որ մի տեղ իրա տեղը չի գտնի, ծնողի համար ավելի ցավալի ա, քան տղա երեխայինը:

(2-րդ խորացված հարցազրույց,
40 տարեկան, միջին մասնագիտական կրթություն)

Չամուսնացած աղջիկների ֆոկուս-խմբի մասնակիցները իրենց հերթին փաստում են, որ առանձնապես տարբերություն չկա ընտանիքի ներսում՝ երեխաների սեռերի հետ կապված: Ավելին, մասնակիցների մեծ մասը փաստարկներ էր բերում ընտանիքի ներսում կնոջ որոշիչ դերը ընդգծելու համար: Համաձայն չամուսնացած աղջիկների ֆոկուս-խմբի մասնակիցների՝ տղա կամ աղջիկ երեխաների կարծիքը նույնպես հավասարապես է ընդունվում ընտանիքում, պարզապես առաջնեկների դեպքում կարծիքը ավելի է հաշվի առնվում՝ անկախ սեռից: Տարբեր հարցազրույցների մասնակիցների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ աղջիկների և տղաների պարագայում ընտանիքի ներսում տարբերակված վերաբերմունքի հետ կապված առանձնակիր խնդիրներ չկան, և խնդիրը հասարակության մեջ կամ կյանքում հետագա հեռանկարներն են և կնոջ ավելի խոցելի վիճակը: Հարկ է նշել, որ ամուսնացած կանանց ֆոկուս-խմբի մասնակիցները նշում են, որ կնոջ դերը վերջին տասնամյակներում նկատելիորեն բարձրացել է հասարակության մեջ:

Քանակական հարցման արդյունքները, կարելի է ասել, նույնությամբ կրկնում են որակական՝ ֆոկուս-խմբերից և խորացված հարցազրույցներից ստացված պարզաբանումները: Այն հարցին, թե ինչու է ընտանիքը նախապատվություն տալիս տղա, այլ ոչ թե աղջիկ երեխաներին, քանակական հարցմանը մասնակից հարցվողների 39.2%-ը նշել է տղաների տոհմը շարունակող լինելու հանգամանքը, 30.9%-ը՝ ունեցվածքի ժառանգորդ լինելու հանգամանքը: Կարևորվում է նաև տղաների՝ հայրենիքի պաշտպան լինելու փաստը, ապագայում ֆինանսական աջակցություն և ապահովություն տրամադրելու կարողու-

թյունը (գծապատկեր 3.6):

Այն ընտանիքները, որոնք գերապատվությունը տալիս են աղջիկներին, շեշտադրում են վերջիններիս կապը ծնողների հետ, մասնավորապես՝ ծնողներին օգնության հասնելու հանգամանքը (6.6%), ծնողին հոգեբանորեն աջակցելը (4.8%) կամ ծեր տարիքում ծնողին նեցուկ լինելը (3.5%):

Գծապատկեր 3.6. Ինչու՞ է ձեր ընտանիքը նախապատվություն տալիս տղա, այլ ոչ թե աղջիկ երեխաներին



Դատելով ստացված արդյունքներից՝ առաջին երեխայի սեռը նույնպես ազդում է ընտանիքի նախապատվությունների վրա: Այն ընտանիքներում, ուր նախապատվությունը տրվում է աղջիկներին, առաջնեկը 80.1%-ի դեպքում եղել է աղջիկ, իսկ այն ընտանիքներում, որոնք նախապատվությունը տալիս են տղաներին, առաջնեկը 60.8%-ի դեպքում եղել է տղա:

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Համաձայն քանակական հարցման արդյունքների՝ առաջին երեխայի աղջիկ ծնվելուց հետո ընտանիքների 99%-ում որևէ դժգոհություն ընտանիքի անդամների կողմից չի արտահայտվել: Անհրաժեշտ է նշել, որ անգամ այն ընտանիքներում, ուր նախապատվությունը տրվում է տղաներին, առաջին երեխայի ծնունդից հետո դեպքերի գերակշիռ մեծամասնությամբ (88.4%) ճնշումներ չեն եղել նաև հաջորդ երեխայի տղա լինելու կապակցությամբ: Այն ընտանիքներում (11.6%), ուր եղել են որոշակի ճնշումներ, դրանք գործադրվել են հիմնականում ամուսինների կողմից (82.6%), իսկ յուրաքանչյուր հինգերորդ դեպքում ամենամեծ ճնշումը գործադրվել է սկեսուրների կողմից (17.3%): Վերջին երեխայի ծնունդից հետո ևս 89.4% դեպքերում ճնշումներ չեն եղել:

Որակական հարցազրույցներում նույնպես քննարկվել է ճնշումների հարցը: Մասնավորապես քննարկվել են կանանց վրա ճնշումները ընտանիքի ներսում և շրջապատի կողմից: Շրջապատի ճնշումների հետ կապված՝ հարցազրույցների մասնակիցների կողմից նշվում է, որ դրանք արտահայտվում են բամբասանքների և ծաղրանքների ձևով:

-Ամեն ստեղծված առիթին երևի թե կծաղրեն: Ես իմ վրա օրինակ բերեմ. իմ համար նշանակություն չկա՝ աղջիկ, թե տղա, բայց այն մեր ընկերը, որ երկու աղջիկ է ունեցել, պահ է լինում՝ մենք էլ իրեն ծաղրում ենք:

(Խառը խումբ, կանայք/տղամարդիկ)

Սակայն, դատելով հարցազրույցների մասնակիցների արձագանքների ընդհանրական վերլուծությունից՝ չի կարելի ասել, որ հասարակության կողմից ճնշումները կրում են համատարած բնույթ: Համաձայն ֆոկուս-խմբերի մասնակիցների՝ գյուղական բնակավայրերում ընտանիքների վրա արտաքին ազդեցությունը շատ ավելի մեծ է քաղաքային բնակավայրերի համեմատությամբ: Քաղաքային բնակավայրերում ընտանիքները պարզապես շարունակում են կարևորել հասարակության կարծիքը:

-Իմ կարծիքով մենք դեռ գտնվում ենք այն մակարդակի վրա, որ մեզ դեռ հետաքրքրում է, թե ինչ կասեն հարևանները:

(Տղամարդկանց ֆոկուս-խումբ)

Ամուսնացած կանանց ֆոկուս-խմբի մասնակիցներից մեկի ձևակերպմամբ՝ դրանք ոչ թե ճնշումներ են, այլ խորհուրդներ: Իսկ ընդհանրապես՝ այս խմբի մասնակիցները կարծում են, որ նման դեպքեր թեև պատահում են, բայց տարածված չեն: Խորացված հարցազրույցների մասնակիցներից մեկը բերեց իր օրինակը, որն առաջին հայացքից չի կարելի ճնշում համարել, բայց ամեն դեպքում արտահայտում է խղճահարություն, ինչը նույնպես բացասաբար է անդրադառնում կնոջ վրա.

-Երբ հարցնում են, թե՝ ինչ եք ունենալու, ու երբ ասում ես՝ աղջիկ, դե արդեն գիտեն, որ մի աղջիկ էլ ունենք, ասում են՝ դե լավ, ոչինչ, երրորդը անպայման տղա կլինի: Իրենց թվում է, որ դու շատ ծանր ես տանում:

Իսկ ընտանիքների ներսում նման ճնշումներ կարող են լինել, քանի որ կա ընտանիքում երեխաների սեռերի հարաբերակցության հետ կապված որոշակի կարծրատիպ: Միևնույն ժամանակ ամուսնացած կանանց ֆոկուս խմբի մասնակիցները նշում են, որ ճնշումների առկայությունը կամ բացակայությունը կապված է կոնկրետ ընտանիքից, և եթե ընտանիքում մթնոլորտը այնպիսին է, որ ընտանիքի այլ անդամները կարող են ընդհանրապես ազդեցություն ունենալ ամուսնացած զույգի վրա, ապա տղա երեխա ունենալու հանգամանքը պարզապես խոսակցության թեմաներից մեկը կլինի: Նույնական կարծիք է արտահայտվել նաև տղամարդկանց ֆոկուս-խմբում, ինչի հետ համաձայնել են այլ մասնակիցներ ևս:

-Օրինակ, հայ ընտանիքներում կա ըսենց բան. հենց տղան եկավ բանակից՝ պետք է ամուսնանա: Այսինքն՝ տղեն չունի սեփական մտածելակերպ, պրինցիպ ու թաստիք: Այդ ընտանիքի պահողը հայրն է, հայրն էլ իր տղուն ամուսնացնում է զուտ իր տոհմը շարունակելու համար: Եթե այլ կերպ լիներ... Կան ընտանիքներ՝ զուտ տղեն անունով է տղա ու չի կայացել: Այդ ընտանիքում բոլորն էլ կնեղեն իր կնոջը:

Չամուսնացած աղջիկների ֆոկուս-խմբի կարծիքով ևս հասարակական կարծիքը շատ ազդեցիկ է հայկական մշակույթում:

-Հասարակությունը ինքն է դրդում դրան, օրինակ՝ ես շատ եմ ուզում աղջիկ ունենալ, տղա ընդհանրապես չեմ էլ ուզում ունենալ, բայց ես կասկածում եմ, թե հետագայում իմ ամուսինը կամ շրջապատի մարդիկ կընդունեն իմ ասածը, քանի որ ընտանիքներում ընենց չի, որ դու մենակ քո համար ես ունենում այդ երեխան: Ու քանի որ մենք հայ ենք, շատ ենք կարևորում շրջապատի կարծիքը, հասարակության, մտերիմների, դրա համար նրանց կարծիքն ավելի ենք հաշվի առնում: Շատերն ապրում են հասարակության կարծիքի համար, թե ինչ կմտածեն շրջապատի մարդիկ:

Աղջիկների ֆոկուս-խումբ

-Սկեսուրները միշտ ասում են՝ պետք ա տղա, տղաս պետք ա տղա ունենա: Որովհետև ինքը տղա ունեցել ա, իրա գլխին էդ նույն բանը խաղացել են:

Աղջիկների ֆոկուս-խումբ

Ընդհանրապես, որակական հարցազրույցների մասնակիցները նման ճնշումները կապում են ընտանիքների զարգացածության մակարդակի հետ՝ անկախ ընտանիքի ֆինանսական կարողությունից:

-Բայց մեր հասարակությունը փարբերվում է, կան, որ գրագետ մարդիկ փող ունեն, ու կան ոչ գրագետ մարդիկ, որ էլի փող ունեն: Այ դա յուրահատուկ է:

(Տղամարդկանց ֆոկուս-խումբ)

-Ես առհասարակ զարգացած մարդկանց գիտեմ, որոնք միանշանակ չեն կենտրոնանում փողա ունենալու վրա, նույնիսկ խրախուսում են աղջիկ ունենալը և ցանկություն են հայտնում իսկապես, որ իրենց մոտ դուստր լինի, ինչը շատ ողջունելի է: Համենայն դեպս, դա կարելի է կապել մակարդակի հետ:

(Խառը մասնակիցներով ֆոկուս-խումբ, տղամարդիկ/կանայք)

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Այն հարցին, թե ով է իրենց ընտանիքում որոշում, թե քանի տղա և քանի աղջիկ պետք է ունենաք, քանակական հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը պատասխանել է, որ որոշումը կայացնում են ամուսիններով՝ միասնաբար (77.8%): Կանանց միայն 6.6 տոկոսն է ինքնուրույն որոշում, թե ինչ սեռի երեխա պետք է ունենա, իսկ ընտանիքների 10.6%-ում որոշումը կայացվում է բացառապես ամուսնու կողմից: Ինքնուրույն որոշում կայացնող կանանց մոտ կեսը ամուսնացած են (40.2%) կամ ապրում են համատեղ (4.7%) (գծապատկեր 3.7):

Գծապատկեր 3.7. Ձեր ընտանիքում ո՞վ է որոշում, թե քանի աղջիկ և քանի տղա դուք պիտի ունենաք



Ֆոկուս-խմբերի և խորացված հարցազրույցների մասնակիցներին հարցազրույցների ընթացքում առաջարկվել էր պարզաբանել ընտանիքներում երեխաների թվի ընտրության հիմքում ընկած գործոնները: Թե՛ ֆոկուս խմբային և թե՛ անհատական խորացված հարցազրույցների մասնակիցները գտնում են, որ ներկայումս ընտանիքները երեխաների թիվը սահմանափակում են մեկ կամ երկու երեխայով: Բոլոր ֆոկուս-խմբերի մասնակիցները նշում են, որ առաջին հերթին երեխաների փոքր թիվը պայմանավորված է երկրում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակով: Այնուհետև որոշ մասնակիցների կողմից օրինակ են բերվում գյուղական բնակավայրերի ընտանիքները, ուր անկախ սոցիալական կարգավիճակից և անգամ ամենաաղքատ ընտանիքներում մեծ թվով երեխաներ են ծնվում: Նշվում է նաև, որ գյուղական բնակավայրերում երեխաները ֆիզիկական ուժ են, ընտանիքին օգնող օղակ, և այդ տեսանկյունից նույնպես կարելի է բացատրել տարբերությունը: Քաղաքային բնակավայրերի պարագայում նշվում է, որ ընտանիքներում ունենում են այնքան թվով երեխա, որքան ընտանիքը ի վիճակի կլինի պահել, տալ կրթության և բնակարանային հարցեր լուծել:

- Եթե նախկինում երկու երեխա էին ուզում ունենալ, հիմա եթե առաջինը փղա եղավ, երկրորդ երեխան էլ չեն էլ ունենալու, քանի որ մտածում են՝ մեկն ունենան ու լավ պահեն: Բայց չեն մտածում՝ երեխայի համար էլ, որ հետո ինքը մեծացավ, մենակ ա լինելու, դժվարություններ են լինելու:

(Չամուսնացած աղջիկների խումբ)

- Հայկական ընտանիքներում այնպես չի, որ երեխաներին ունեցան ու միևնույն լինի, թե ինչ կլինի ու ոնց կլինի նրանց հետ: Ավելի հարմար է, որ քիչ լինի ու ամեն ինչին հասցնեն երեխաներին:

(Տղամարդկանց խումբ)

- Ես, օրինակ, մի տղա ու մի աղջիկ ունենայի, երրորդը չէի բերի: Էդ հասարակ ամեն առումով ասենք պետք չի էլի[2]:

(Ամուսնացած կանանց խումբ)

Խորացված հարցազրույցների մասնակից բոլոր կանայք նույնպես առաջին հերթին շեշտադրում են սոցիալ-տնտեսական գործոնները: Ֆոկուս-խմբերի հարցազրույցների մասնակիցները կարծում են, որ ներկայումս երեխաների թիվն ընտանիքներում ամեն դեպքում սահմանափակվում է երկուսով, ի տարբերություն նախկինի, երբ ընտանիքներն այնքան երեխա էին ունենում, մինչև տղա ծնվի:

-Մեր բարեկամներից մեկը 10 տարի ա պայքարում է, իհարկե արհեստական ընդհատումներով: Էնքան ընդհատեց, որ տղա ունենան, ու հիմա սպասում են տղայի: Բայց աղջիկներ ունեին:

(Չամուսնացած աղջիկների
ֆոկուս խումբ)

-Հասարակությունում չգիտեմ, բայց կոնկրետ ես գտնում եմ, որ այսօրվա պայմաններում դժվար է պահել երկուսից ավել: Մեր սերունդների ընտանիքներում երեք-չորս երեխա ենք եղել, այժմյան հասարակությունում խուսափում են, ինձ թվում է, որ դա սոցիալական պայմաններից ելնելով է այդպես: 21-րդ դար է ու երեխայի պահանջներն ավելի շատ են: Եթե նախկինում կարող էին երեխա ունենալ ու երեխան առանց որևիցե խմբակի ուղարկելու պահել, քանի որ դպրոցը լավ մատչելի գիտելիք էր տալիս, իսկ այսօր պետք է քոլեջներ ու խմբակներ տանել երեխային, իսկ դրա համար արդեն պայմաններ են պետք: Իսկ այսօր ոչ բոլորն ունեն այդ պայմանները:

(1-ին խորացված հարցազրույց,
35 տարեկան, բարձրագույն կրթություն)

Խորացված հարցազրույցի մասնակից կանանցից մեկը նշում է նաև որ այսօրվա հասարակությունում աղջիկ երեխաների և կանանց վրա դեռևս նորմերով և արժեքներով պայմանավորված որոշակի ճնշումներ կան, ինչի արդյունքում ընտանիքներում խուսափում են աղջիկ երեխաներից և սահմանափակվում մեկ կամ երկու տղայով:

ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԻ ՈՐՈՇՄԱՆ և ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ (ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Համաձայն քանակական հարցման արդյունքների՝ կանանց 91.7%-ը լսել է սաղմնային փուլում երեխայի սեռը որոշելու մեկ կամ մեկից ավելի մեթոդների մասին: Նրանց 88.9%-ը լսել է ուլտրաձայնային մեթոդի մասին,15.9%-ը՝ ավանդական, իսկ 1.5%-ը ամնիոցենտեզի մասին: Մեթոդների վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուր են հանդիսանում բուժհիմնարկների աշխատակիցները և ընկերներն ու հարազատները (գծապատկեր 3.8):

[2] Հարցազրույցին մասնակից այս կնոջ առաջին երկու երեխաներն աղջիկներ են, և երրորդ երեխան ունեցել է, որպեսզի տղա ունենա:

Գծապատկեր 3.8. Մեթոդների մասին տեղեկությունների աղբյուրները



Քանակական հարցման մասնակիցների 66.9%-ի կարծիքով՝ նշված մեթոդներն իրենց համար մատչելի են: Դժվարացել են պատասխանել 25.7%-ը և միայն 7.4%-ն է նշել որ մեթոդը մատչելի չի եղել: Ամեն չորրորդ կին (24.1%) վերջին հինգ տարիների ընթացքում օգտվել է նշված մեթոդներից առնվազն մեկից:

Որակական հարցման արդյունքները նույնպես փաստում են, որ կանայք բավական իրազեկված են երեխայի սեռը որոշելու համար նախածննդաբերական փուլում անցկացվող ստուգումներից: Հիմնական տեղեկատվությունը ստացվում է ծանոթներից, ինտերնետից, բուժանձնակազմից, և այս առումով տեղեկատվական որևէ սահմանափակում որպես այդպիսին չկա:

Երեխայի սեռը որոշելու հնարավորությունների հարցը քննարկվել է աղջիկների և ամուսնացած կանանց ֆոկուս-խմբում, ինչպես նաև անհատական խորացված հարցազրույցներում: Մասնակիցների որոշ մասը տեղեկացրեց, որ կան հաշվարկի մեթոդներ, որոնք կարելի է գտնել ինտերնետում կամ տարբեր ամսագրերում, և հնուց եկած մեթոդներ, որոնց արդեն ներկաները չեն տիրապետում: Քննարկումների մասնակիցների մյուս մասը թերահավատորեն է վերաբերվում այդ հարցերին և չի հետաքրքրվում դրանցով: Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ նման մեթոդները այդքան տարածված չեն:

Ֆոկուս-խմբերի և հատկապես խորացված հարցազրույցների ընթացքում հղիության ընդհատման մեթոդների վերաբերյալ քննարկումներում առավել ընդգծված թեմաներից մեկը դեղահաբերի միջոցով հղիության ընդհատումն է: Մասնակիցները նշում են, որ այսօր այդ մեթոդը բավականին տարածված է, քանի որ այն շատ մատչելի է: Սայտոտեկ կոչվող դեղահաբերը կարելի է գնել դեղատներում, այն անգամ առաջարկվում է դեղատան աշխատակիցների կողմից, եթե հաճախորդը խորհուրդ է հարցնում:

-Օրինակ, բոլորն էլ գիտեն մի դեղ, որը օգտագործում են բոլորը, կան, որ ի վերջո գալիս են մաքրելու աբորտի միջոցով, իսկ մարդ էլ կա, որ լավ ա լինում ու խորհուրդ ա տալիս, որ դա անեն: Լինում ա, որ անում են ու բժշկական միջամտության կարիք չի լինում, նայած օրգանիզմ:

(2-րդ խորացված հարցազրույց,
40 տարեկան, միջին մասնագիտական կրթություն)

Հղիության ընդհատման բժշկական միջամտության տարբերակը նույնպես մասնակիցների կարծիքով, այդքան էլ դժվարամատչելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթե կինը հանգել է այդ որոշման, ապա գումար ևս կգտնվի: Խնդիրը, մասնակիցների կարծիքով որակյալ բժիշկներ, մասնագետներ գտնելն է:

-Մարդու մտքին տեղ լինի: Դա հիմա այնքան հեշտ ա իմանալ: Գնում ես հիվանդանոց, ասում ես, ըսենց-ըսենց ու վերջ: Համենայն դեպս շատ թանկ չի, ու ավելի էժան ա, քան եթե ծննդաբերես: Մի քանի տարի առաջ 10.000 էր:

(Խառը ֆոկուս-խումբ,
կանայք/տղամարդիկ)

-Մարդ, որ էդ վիճակում ա հայտնվել, ուրիշ ճար չունի, պետք ա գնա էդ քայլին, ինքը սիալ ա համարում դա, չի ընդունում, բայց եթե այդ վիճակում է արդեն ինքը ելք չունի, ավելի լավ է դա, քան թե երեխային բերի ու չկարողանա պահել:

(Ամուսնացած կանանց ֆոկուս խումբ)

ՏՂԱՆԵՐԻ ԳԵՐԱԿՇՌՈՂ ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Բոլոր ֆոկուս-խմբային քննարկումներում և անհատական խորացված հարցազրույցներում քննարկվել են նաև հեռանկարում տղաների գերակշռող ծնունդների հետևանքները հասարակության վրա: Ընդհանուր առմամբ քննարկումների մասնակիցներն ընդունում են, որ երևույթը անբնական է: Կարծիքներ են հնչել, որ նման ընթացքը կարող է հանգեցնել ավելի ագրեսիվ հասարակության ձևավորման և բացի այդ, կավելանան ֆիզիոլոգիական շեղումները: Հարցազրույցներից տպավորություն կար, որ մասնակիցների որոշ մասը թվային տվյալների պարզապես չի տիրապետում.

-Ապագայում կլինի այն, որ ինչպես որ մի քանի տարի առաջ էր մեկ տղային երեք աղջիկ, հիմա կգնա-կգնա ու կհասնի նրան, որ մեկ աղջկան երեք տղա կլինի:

(2-րդ խորացված հարցազրույց,
40 տարեկան, միջին մասնագիտական կրթություն)

-90-ականներին էնքան շատ տղա էր ծնվում, որ նույնիսկ ասում էին, որ պատերազմի հետ ա կապված, որ որտեղ պատերազմ ա լինում, էնտեղ հետո տղաներ շատ են ծնվում:

(Ամուսնացած կանանց ֆոկուս խումբ)

-Մեզ բնությունը հենց պահում ա չէ, թեկուզ երկրաշարժից հետո սկսեցին տղաներ ավելի շատ ծնվել: Անկախ մարդկանցից բնությունը ինքն արդեն պահում ա:

(Չամուսնացած աղջիկների
ֆոկուս-խումբ)

Շատերի կարծիքով էլ երևույթը կինքնակարգավորվի, և քանի որ հայերը մոբիլ ազգ են, ապա պարզապես կավելանան խառնամուսնությունները և արտերկրից տղամարդիկ իրենց համար զուգընկեր կգտնեն.

-Կգնան ուրիշ ազգից կնիկ կբերեն: Դե ընտանիքը պետք է կազմվի, ուրիշ ազգերի հետ կիաառնվեն:

(Տղամարդկանց ֆոկուս խումբ)

Իրավիճակի փոփոխության առումով մասնակիցները համաձայն են, որ պետք է բարձրացնել կնոջ դերը հասարակության մեջ, որպեսզի ընտանիքները չվարանեն աղջիկ երեխաներ ունենալ: Ավելին՝ մասնակիցներից շատերը գտնում են, որ իրավիճակն արդեն իսկ զգալիորեն տարբերվում է նախկինից.

-Արդեն փոխվում ա: Շատ ընտանիքներում աշխատում են կանայք, տղամարդիկ ավելի շատ տանն են: Թեկուզ, օրինակ, մենք որ տուն ենք գնում, երթուղային տաքսիներում հիմնականում կանայք են, ովքեր աշխատանքից տուն են գնում: Ուղղակի տղամարդիկ դա բարձրաձայն չեն ասում, իսկ կանայք էլ նախընտրում են լռել, եթե կողքին տղամարդ կա: Բայց դա այդպես ա:

(Չամուսնացած աղջիկների
ֆոկուս-խումբ)

-Առաջ կանայք չէին սովորում, չէին աշխատում, իսկ հիմա չկա մի բնագավառ, որտեղ կին չլինի: Այն օրը ես կարդում էի մի շատ հետաքրքիր նյութ, որտեղ պատմվում էր, թե կանայք ինչերի են ընդունակ, ինչեր մինչ այդ արել են տղամարդիկ, ու շատ խիստ տղամարդկային մասնագիտություններ, օրինակ, ռազմական օդաչու կանանց մասին էի կարդում, ալպինիստ կանանց մասին էի կարդում, վարորդ, որոնք հիմնականում տղաներին են բնորոշ, ու հիմա աղջիկներն ու կանայք հասել են այն մակարդակի, հոգեբանորեն այն մակարդակի, որ չեն վիճում, նույնիսկ շատերը կատարելագործել են էդ նախասիրությունները ու մեծ հաջողությունների են հասել:

(Զամուսնացած աղջիկների
ֆոկուս- խումբ)

-Ըստ օրենքի աղջկա և տղայի տեր կանգնելը ժառանգությանը հավասար է: Կինը պետք է այնպես անի, որ իր դերն էլ կարևորվի: Իմ կարծիքով շատ բարձր է կնոջ դերը, պետք է կանայք ավելի վստահ լինեն, և արժեքավորեն իրենց, քան սպասեն, որ տղամարդիկ մի բան կանեն: Իրենք պետք է որոշեն իրենց արժեքը՝ իրենք կին են, որը լինելու ա միայն մայր, թե, կին, որը աշխատելու է, իմ կարծիքով կինն է տունը պահում:

(Խառը ֆոկուս-խումբ,
տղամարդիկ/կանայք)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հետազոտման մեջ ընդգրկված կանանց մեծամասնությունը իրենց վերարտադրողական ֆունկցիան սկսել են բարենպաստ վերարտադրողական՝ 19-35 տարեկան հասակում:
2. Բացահայտ են որոշակի օրինաչափություններ ծննդաբերությունների թվի աճի և վերարտադրողական վարքագծի միջև:
   - Հղիությունը ցանկալի է եղել առաջին հղիության ժամանակ 99.8%-ի համար, երկրորդի ժամանակ՝ 89.1%-ի, և 6-րդի դեպքում՝ 16,8 %-ի համար:
   - Ծննդաբերությունների թվի աճին զուգահեռ՝ հետագայում երեխա ունենալու ցանկություն ունեցող կանանց թիվը նվազել է համարյա 100%-ից 19,8%-ի:
   - Ծննդաբերությունների թվի աճին զուգահեռ նվազել է կենդանածնությամբ ավարտված ծննդաբերությունների հաճախականությունը 95,2%-ից 16,8%-ի և բարձրացել հղիության արհեստական ընդհատումների հաճախականությունը 0,3%-ից հասնելով 81,4%-ի:
3. Անկախ հղիության կարգից, անգամ առաջին հղիության դեպքում, կանանց շրջանում մոտ 2.7 անգամ ավելի մեծ է տղա երեխաների նախապատվությունը:
4. Առաջին և երկրորդ երեխաների տղա/աղջիկ հարաբերակցությունը կազմել է համապատասխանաբար 1.03 և 1.02, ինչը գրեթե չի տարբերվում նորածինների սեռերի բնական հարաբերակցության գործակցից:
5. Երրորդ և հատկապես չորրորդ ծննդաբերությունից ծնված երեխաների տղա/աղջիկ հարաբերակցությունը կազմել է 1.5 և 1.7, ինչը էականորեն տարբերվում է ծնելիության բնականոն գործընթացը բնութագրող ցուցանիշներից:
6. Սկսած 5-րդ ծննդաբերությունից նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության աստիճանական նվազում (1.4), իսկ 6-րդի դեպքում՝ 1.2, ինչն անուղղակիորեն վկայում է բազմազավակ ընտանիքներում արդեն իսկ երկու սեռերի երեխաների առկայության մասին:
7. Քաղաքաբնակ կանանց շրջանում սկսած 3-րդ ծննդաբերությունից նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության գործակցի բարձրացում, որն առավելագույն մեծության է հասնում 4-րդ ծննդաբերության դեպքում (3.3):
8. Գյուղական վայրերում 1-4-րդ ծննդաբերությունների դեպքում տղա/աղջիկ հարաբերակցությունը մոտ է բնականոն գործընթացի ցուցանիշներին (1.1 և 1.0), նկատվում է որոշակի նվազում 3-րդ ծննդաբերության դեպքում (0.7) և փոքր ինչ բարձրացում 5-րդի դեպքում (1.3)
9. Բարձրագույն կրթությամբ կանանց մոտ 2-ից 5-րդ ծննդաբերության դեպքում նկատվում է տղա/աղջիկ հարաբերակցության բարձրացում (1.2-1.6)՝ աննախադեպ մեծության հասնելով 5-րդ ծննդաբերության դեպքում (3.2):
10. Որոշակի կախվածություն է նկատվել կանանց եկամուտների և տղաների գերակշռության միջև, մասնավորապես, ցածր եկամուտ ունեցող կանանց համեմատությամբ, 100000 դրամ և ավելի եկամուտ ունեցողների մոտ արդեն իսկ 1-ին և 2-րդ երեխաների պարագայում հարաբերակցությունը համապատասխանաբար կազմում է 1.22 և 1.33, իսկ 4-րդ և 5-րդի դեպքում ակնհայտ է դառնում տղաների աննախադեպ գերակշռությունը՝ կազմելով համապատասխանաբար 8.2 և 7.6
11. Չնայած նախածննդյան շրջանում հարցված կանանց երեխայի սեռի որոշելու վերաբերյալ բարձր իրազեկվածությանը (91.7%), նախածննդյան շրջանում միայն 420 կին (22.1%) էր դիմել սեռի որոշման:
12. Սեռը որոշելուց հետո ճնշող մեծամասնությունը՝ 397(94.5%), շարունակել է հղիությունը: Հղիության արհեստական ընդհատման են դիմել 23 (5.5%) կին: Այսպիսով, հետազոտության տվյալները վկայում են, որ 2830 տնային տնտեսություններում հայտնաբերված 2925 վերարտադրողական տարիքի (15-49) կանանց 0.8 %-ը (23) վերջին 5 տարիների ընթացքում ընդհատել են հղիությունը՝ պայմանավոր-

ված պտղի սեռի անցանկանալի լինելու հանգամանքով:

13. Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման որոշումը հիմնականում (82.6%) կայացվել է ինքնուրույն՝ հղիների կողմից:

14. Ցածր էր կանանց իրազեկվածությունը Հայաստանում հղիության արհեստական ընդհատման օրենսդրական թույլտվության մասին, ընդամենը 57.4%:

15. Չնայած հարցվածների ընտանիքներում տղա երեխաների 6 անգամ ավելի բարձր նախապատվությանը, այնուամենայնիվ ծնվելուց հետո աղջիկ երեխաների նկատմամբ առկա է հավասար վերաբերմունք, ու խնամք:

16. Աբորտի դիմած կանանց շրջանում (368 կին) սեռով պայմանավորված աբորտների հաճախականությունը կազմել է 4.6 %:

17. Մարդկանց թե՛ շրջապատում և թե՛ ընտանիքում տարբերակված մոտեցում կա երեխայի սեռի նախապատվության հարցում: Կանանց շրջապատում տղաներին նախապատվություն տվող մարդկանց թիվը (59.3%) մոտ տասն անգամ ավելի է աղջիկներին նախապատվություն տվող մարդկանց թվից (5.6%): Գյուղական բնակավայրերում հարցված կանանց մեծամասնության (70.4%) կարծիքով իրենց շրջապատում նախապատվությունը տրվում է տղաներին, և միայն 1.6%-ն է գտնում, որ իրենց շրջապատում նախապատվությունը տրվում է աղջիկներին:

18. Ընդհանուր առմամբ տղա երեխաներին նախապատվություն տվող ընտանիքները մոտ վեց անգամ ավելի են, քան աղջիկներին նախապատվություն տվող ընտանիքները (համապատասխանաբար 43.8% և 7.6%), գյուղական բնակավայրերում տարբերությունը տասնապատկվում է (համապատասխանաբար 51.8% և 4.5%), իսկ քաղաքային բնակավայրերի պարագայում տարբերությունը մոտ քառակի է (համապատասխանաբար 37.6% և 10%):

19. Քանակական հարցմանը մասնակից կանանց 41.5 տոկոսը նշել են, որ առաջին հղիության ժամանակ ցանկանում էին տղա ունենալ և միայն ամեն յոթերորդ (14.6%) հարցվողն է նշել, որ ցանկանում էր աղջիկ երեխա ունենալ: Հատկանշական է, որ առաջին հղիության դեպքում հարցվողների մոտ կեսի (44%) համար երեխայի սեռը նշանակություն չի ունեցել:

20. Առաջին երեխայի սեռը նույնպես ազդում է ընտանիքի նախապատվությունների վրա: Այն ընտանիքներում, ուր նախապատվությունը տրվում է աղջիկներին, առաջնեկը 80.1%-ի դեպքում եղել է աղջիկ, իսկ այն ընտանիքներում, որոնք նախապատվությունը տալիս են տղաներին, առաջնեկը 60.8%-ի դեպքում եղել է տղա:

21. Այն հարցին, թե ով է ընտանիքում որոշում, թե քանի տղա և քանի աղջիկ պետք է ունենան, քանակական հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը պատասխանել է, որ որոշում են ամուսիններով միասնաբար (77.8%):

22. Որակական հարցազրույցների ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տղաների նկատմամբ նախընտրությունը հիմնականում պայմանավորված է տվյալ տոհմի շարունակումը անհրաժեշտությամբ, ընտանիքում տղամարդու ազդեցիկ դիրքով, հասարակության մեջ տղաների շատ ավելի ակտիվ դերակատարությամբ և սոցիալական մոբիլությամբ:

23. Այն հարցին, թե ինչու է ընտանիքը նախապատվություն տալիս տղա, այլ ոչ թե աղջիկ երեխաներին, քանակական հարցմանը մասնակից հարցվողների 39.2%-ը նշել է տղաների՝ տոհմը շարունակող լինելու հանգամանքը, 30.9%-ը՝ ունեցվածքի ժառանգորդ լինելու հանգամանքը:

24. Որակական հարցազրույցների մասնակիցների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ աղջիկների և տղաների պարագայում ընտանիքի ներսում տարբերակված վերաբերմունքի հետ կապված առանձնակի խնդիրներ չկան և խնդիրը հետագայում հասարակության մեջ կնոջ ինքնադրսևորման հեռանկարները և կնոջ ավելի խոցելի վիճակն է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Խառը ֆոկուս-խումբ, տղամարդիկ/կանայք	**Կրթություն**			
	Միջնակարգ/Միջնակարգ մասնագիտական		**Բարձրագույն**	
Տարիք	Սեռ		Սեռ	
	արական	իգական	արական	իգական
18-35	1	1	1	1
36-55	1	1	1	1
56 և բարձր	1	1	1	1
Ընդհանուր մասնակիցների քանակը մեկ ՖԽ-համար	*12*			

Տղամարդկանց ֆոկուս-խումբ	**Կրթություն**	
	Միջնակարգ/Միջնակարգ մասնագիտական	**Բարձրագույն**
Տարիք	Սեռ	Սեռ
	արական	արական
18-35	2	2
36-55	2	2
56 և բարձր	2	2
Ընդհանուր մասնակիցների քանակը մեկ ՖԽ-համար	*12*	

Ամուսնացած կանանց ֆոկուս- խումբ	**Կրթություն**	
	Միջնակարգ/Միջնակարգ մասնագիտական	**Բարձրագույն**
Տարիք	Սեռ	Սեռ
	իգական	իգական
18-35	2	2
36-55	2	2
56 և բարձր	2	2
Ընդհանուր մասնակիցների քանակը մեկ ՖԽ-համար	*12*	

Չամուսնացած կանանց ֆոկուս-խումբ	**Կրթություն**	
	Միջնակարգ/Միջնակարգ մասնագիտական	**Բարձրագույն**
Տարիք	Սեռ	Սեռ
	իգական	իգական
18-35	4	4
36-55	2	2
Ընդհանուր մասնակիցների քանակը մեկ ՖԽ-համար	*12*	

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄԱԿ•Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Տվյալները կօգտագործվեն բացառապես վիճակագրական վերլուծության համար և հրապարակման ենթակա չեն

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ
ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(կանանց հարցաթերթ)

Տնային տնտեսության տարբերակիչ համարը _____
Տնային տնտեսությունում ընտանիքի տարբերակիչ համարը _____

Ուսումնասիրության ժամանակը _____ *ամիս 2011թ.*

Բնակավայր _____ _____
անվանում *կոդ*

Մարզ _____ _____
անվանում *կոդ*

Կլաստերի համար _____ *կոդ*

Հարցազրուցավարի համարը _____ *կոդ*

Հարցվողի անունը _____

Տնային տնտեսության գլխավորի անունը _____

Հարցազրույցի սկիզբը _____ *ավարտը* _____

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Բարեվ Ձեզ:
Իմ անուն ազգանունն է _____:
Ես աշխատում եմ ՀՀ Առողջապահության նախարարության, Ազգային վիճակագրական ծառայության եվ Միացյալ Ազգերի Կազմակերպության Բնակչության Հիմնադրամի հետ: Մենք անցկացնում ենք հարցում, որի միջոցով ցանկանում ենք պարզել սեռով պայմանավորված հղիության ընդհատումների տարածվածությունը եվ պատճառները Հայաստանում: Կխնդրեինք Ձեր համաձայնությունը մասնակցելու այս կարևոր ուսումնասիրությանը: Մենք երաշխավորում ենք, որ Ձեր տրամադրած տեղեկատվության գաղտնիությունը ամբողջությամբ կպահպանվի:

Այժմ թույլ տվեք Ձեզ դիմել որոշ հարցերով:

1.1 Քանի՞ ընտանիք է համատեղ բնակվում այս տնային տնտեսությունում:
(նկատի է առնվում նուկլեար ընտանիքը՝ ամուսիններ եվ նրանց չամուսնացած երեխաները)

_____ ընտանիք

1.2 15-49 տարեկան քանի՞ կին է բնակվում այս տնային տնտեսությունում:

_____ կին

1.3 Երբեվիցե հղիացած 15-49 տարեկան քանի՞ կին է բնակվում այս տնային տնտեսությունում:

_____ կին

Հարցման ենթակա չեն 15-49 տարեկան այն կանայք, որոնք երբեվիցե հղիացած չեն եղել:

2.1 Խնդրում եմ ներկայացնել տեղեկատվություն այդ կանանցից յուրաքանչյուրի տարիքի /լրացած տարիների թիվը/ եվ ընտանեկան վիճակի մասին:

Գծային համարը	Տարիքը	Ամուսնական վիճակը*
1		
2		
3		
4		
5		
6		

* ***Ամուսնական վիճակը:***
1. Ներկայումս ամուսնացած է եվ ապրում է ամուսնու հետ
2. Ներկայումս ամուսնացած է, բայց առանձին են ապրում
3. Ապրում է տղամարդու հետ քաղաքացիական ամուսնության մեջ
4. Ամուսնալուծված է
5. Այրի է
6. Երբեք ամուսնացած չի եղել, բայց ունի երեխա(ներ)
7. Այլ պատասխան _____

- *Եթե տնային տնտեսությունում ապրում են ուսումնասիրության նպատակին համապատասխանող կանայք, ապա թույլատվություն ստացեք նրանց հետ հանդիպելու համար, ներկայացեք եվ աշխատեք ստանալ հարցմանը մասնակցելու նրա համաձայնությունը:*

- *Եթե ընտրված կինը տանը չէ կամ նախընտրում է հարցերին պատասխանել մեկ այլ, իրեն համար առավել հարմար ժամի, ապա գրանցեք նրանց անունը /առանց ազգանունի/ եվ ձեր կրկնակի այցի օրը:*

Անունը _____

Երկրորդ այցի օրը _____ ժամը _____

Երրորդ այցի օրը _____ ժամը _____

- *Եթե երեք այցելություններից հետո ձեզ այդպես էլ չհաջողվեց հանդիպել ընտրված կնոջ հետ, "Այցելությունների գրանցում – արդյունք" տողում նշեք կոդ (4) եվ անցեք հաջորդ հասցեն*

Այցելությունների գրանցում

Այցի համարը	1	2	3
Արդյունքը*			

****Այցելությունների արդյունքի կոդը***
1. Հարցումը կատարվել է տանը եվ լիարժեք է ավարտվել
2. Հարցումը կատարվել է այլ վայրում _____ *եվ լիարժեք է ավարտվել*
3. Հարցմանը համապատասխան կանայք չկան
4. Տանը ոչ ոք չկա
5. Ընտրված կինը տանը չէ
6. Լրիվ մերժում
7. Ընտրված կինը հրաժարվեց պատասխանել հարցերին
8. Տանը / բնակարանում որեվէ մեկը չի ապրում (պատճառը) _____
9. Պատասխանողն անիրազեկ է _____
10. Դուռը չեն ուզում բացել
11. Այլ արդյունք

Եթե ձեզ հաջողվի հանդիպել ընտրված կնոջ հետ, ներկայացեք, բացատրեք ձեր այցելության նպատակը եվ փորձեք ստանալ հարցում անցկացնելու համար նրա համաձայնությունը:

2.2 Հարցազրույցը վարվում է _____ կնոջ հետ:

ԲԱԺԻՆ Ա: ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
Ա.1	Լրացած տարիների թիվը:	Լրացել է իմ _____ տարեկանը	
Ա.2	Ձեր հասած ամենաբարձր կրթական մակարդակը:	Քանի՞ տարվա մեջ եք հասել այդ մակարդակին:	
	Մակարդակ 1. Զունի տարրական _____ 2. Տարրական (1-4 դաս) _____ 3. Հիմնական _____ 4. Ավագ _____ 5. Նախամասնագիտական /արհեստագործական/ _____ 6.Միջին մասնագիտական /տեխնիկում, քոլեջ/ _____ 7.Բարձրագույն _____ 8.Հետբուհական _____	Տարիներ 1. (0) _____ 2. (0-4) _____ 3. (0-5) _____ 4. (0-3) _____ 5 (0-2) _____ 6. (0-5) _____ 7. (0-7) _____ 8. (0-4) _____	
Ա.3	Համարու՞մ եք Ձեզ որևէ հավատքի հետևորդ:	Հայ առաքելական _____ 1 Հայ կաթոլիկ _____ 2 Հայ ավետարանչական _____ 3 Աղանդավոր _____ 4 Շար-ֆադինական (եզդի) _____ 5 Այլ _____ 6 Ոչ _____ 7	
Ա.4	Ձեր ամուսնական կարգավիճակը:	Ամուսնացած_____ 1 Ամուրի _____ 2 Ամուսնալուծված _____ 3 Այրիացած _____ 4 Ապրում են համատեղ _____ 5	
Ա.5	Ինչպիսի՞ ընտանիքում եք ապ-րում:	Նուկլեառ _____ 1 Ծնողների հետ համատեղ _____ 2 Ընդլայնված (ծնողների ու այլ բարեկամների հետ) _____ 3	
Ա.6	Քանի՞ հոգուց է բաղկացած ձեր ընտանիքը:	Թիվը _____	

A.7	Ո՞րն է ձեր ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրը:	Գյուղատնտեսությունը _____ 1 Առևտուրը (մեծածախ, այլ) _____ 2 Սեփական գործը/բիզնեսը _____ 3 Պետական աշխատանքը _____ 4 Օրավարձով աշխատանքը _____ 5 Դրամական փոխանցումներն արտերկրից_____ 6 Վարձակալությունից ստացված եկամուտը _____ 7 Թոշակը/նպաստը (նշել) _____ 8 Այլ (նշել) _____ 9	
A.8	Ձեր ընտանիքում ո՞վ է հիմնական ապրուստ վաստակողը:	Ինքս _____ 1 Ամուսինս/զուգընկերս _____ 2 Ծնողներս _____ 3 Ամուսնուս/զուգընկերոջս _____ 4 Այլ (նշել) _____ 5	
A.9	Ձեր ամուսնու/զուգընկերոջ հասած ամենաբարձր կրթական մակարդակը:	Քանի՞ տարվա մեջ է նա հասել այդ մակարդակին:	
	<u>Մակարդակ</u> 1. Չունի տարրական _____ 2. Տարրական (1-4 դաս) _____ 3. Հիմնական _____ 4. Ավագ _____ 5. Նախամասնագիտական /արհեստագործական/ _____ 6.Միջին մասնագիտական /տեխնիկում, քոլեջ/ _____ 7.Բարձրագույն _____ 8.Հետբուհական _____	Տարիներ 1. (0) _____ 2. (0-4) _____ 3. (0-5) _____ 4. (0-3) _____ 5 (0-2) _____ 6. (0-5) _____ 7. (0-7) _____ 8. (0-4) _____	
A.10	Ո՞րն է ձեր ամուսնու/զուգընկերոջ հիմնական զբաղմունքը:	Գյուղատնտեսությունը _____ 1 Առևտուրը (մեծածախ, այլ) _____ 2 Սեփական գործը/բիզնեսը _____ 3 Պետական աշխատանքը _____ 4 Օրավարձով աշխատանքը _____ 5 Դրամական փոխանցումներն արտերկրից_____ 6 Գործազուրկ է_____ 7 Թոշակառու է/նպաստառու է (նշել) _____ 8 Այլ (նշել) _____ 9	

A.11	Ո՞րն է ձեր հիմնական զբաղմունքը:	Գյուղատնտեսությունը _____ 1 Առևտուրը (մեծածախ, այլ) _____ 2 Սեփական գործը/բիզնեսը _____ 3 Պետական աշխատանքը _____ 4 Օրավարձով աշխատանքը _____ 5 Դրամական փոխանցումներն արտերկրից_____ 6 Գործազուրկ եմ _____ 7 Թոշակառու եմ/նպաստառու եմ (նշել) _____ 8 Տնային տնտեսուհի եմ _____ 9 Այլ (նշել) _____ 10	
A.12	Որքա՞ն է ձեր միջին ամսական վաստակը:	0-ական _____ 1 29999-ից ցածր _____ 2 30001 – 50000 _____ 3 50001 – 100000 _____ 4 100001-ից բարձր _____ 5	
A.13	Ո՞վ է հիմնականում որոշում, թե ինչպես և ինչի վրա պետք է ծախսվեն ձեր վաստակած գումարները:	1. Ինքս _____ 1 2. Ամուսինս/ զուգընկերս_____ 2 3. Ես և ամուսինս /զուգընկերս _____ 3 4. Սկեսրայրս _____ 4 5. Սկեսուրս _____ 5 6. Այլ (բացատրեք) _____ 6	
A.14	Միջին հաշվով որքա՞ն գումար է ձեր ընտանիքում ծախսվել անցյալ ամսվա ընթացքում (ՀՀ դրամ):	1.Մնունդ _____ 2.Տրասպորտ _____ 3.Կրթություն _____ 4.Հագուստ/կենցաղային ապրանքներ _____ 5.Կոմունալ վճարումներ _____ 6.Զվարճություններ _____ 7.Վարկ/պարտք _____ 8.Այլ _____	
A.15	Որքա՞ն է ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտը:	1. Միջին ամսական եկամուտը (դրամ) _____ 2. Հրաժարվում է պատասխանից _____ 3. 0 դրամ _____	

ԲԱԺԻՆ Բ: ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
Բ.1	Խնդրում ենք պատասխանել, արդյոք ձեր տնային տնտեսությունն ունի ստորև բերված հարմարությունները. 1. Հող _____ 2. Մեքենա _____ 3. Գյուղատնտեսական սարքավորումներ _____ 4. Հեռախոսակապ _____ 5. Բջջային հեռախոս _____ 6. Ինտերնետ (համակարգչով, բջջայինով) _____ 7. Գյուղատնտեսական տարածք _____ 8. Առևտրի/ծառայության կետ _____ 9. Արդյունաբերական տարածք _____ 10. Գյուղ. կենդանի / թռչուն _____ 11. Այլ (բացատրեք) _____	<u>ԱՅՈ</u> <u>ՈՉ</u> 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2 1 2	
Բ.2	Որքա՞ն հաճախ եք լսում ռադիո:	Գրեթե ամեն օր _____ 1 Երբեմն (շաբաթը 3-4 անգամ) 2 Հազվադեպ (շաբաթը 1-2 անգամ) 3 Երբեք _____ 4	
Բ.3	Որքա՞ն հաճախ եք դիտում հեռուստացույց:	Գրեթե ամեն օր _____ 1 Երբեմն (շաբաթը 3-4 անգամ) 2 Հազվադեպ (շաբաթը 1-2 անգամ) 3 Երբեք _____ 4	
Բ.4	Որքա՞ն հաճախ եք թերթ կարդում:	Գրեթե ամեն օր _____ 1 Երբեմն (շաբաթը 3-4 անգամ) 2 Հազվադեպ (շաբաթը 1-2 անգամ) 3 Երբեք _____ 4	
Բ.5	Որքա՞ն հաճախ եք կարդում ինտերնետային հաղորդագրություններ/լուրեր:	Գրեթե ամեն օր _____ 1 Երբեմն (շաբաթը 3-4 անգամ) 2 Հազվադեպ (շաբաթը 1-2 անգամ) 3 Երբեք _____ 4	

ԲԱԺԻՆ C: ՀՂԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
C. 1	Քանի՞ տարեկան էիք, երբ ամուսնացաք (երբ սկսեցիք համատեղ ապրել ձեր ամուսնու/զուգընկերոջ հետ):	Լրացել էր իմ _____ տարեկանը	
C. 2	Քանի՞ տարեկան էիք, երբ առաջին անգամ հղիացաք:	Լրացել էր իմ _____ տարեկանը	
C.3	Ամուսնանալիս քանի՞ երեխա էիք ուզում ունենալ և ի՞նչ սեռի:	Աղջիկների ցանկալի թիվը _____ Տղաների ցանկալի թիվը _____	
C 4	Ի՞նչ էիք ցանկանում ունենալ առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա:	Աղջիկ _____ 1 Տղա _____ 2 Տարբերություն չկար _____ 3	
C.5	Իսկ ի՞նչ երեխա էր ցանկանում ձեր ամուսինը /զուգընկերը, որ դուք ունենայիք ձեր առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա:	Աղջիկ _____ 1 Տղա _____ 2 Տարբերություն չկար _____ 3 Հնարավոր չէ պատասխանել _____ 4	
C.6	Իսկ ի՞նչ երեխա էր ցանկանում ձեր սկեսուրը, որ դուք ունենայիք ձեր առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա:	Աղջիկ _____ 1 Տղա _____ 2 Տարբերություն չկար _____ 3 Հնարավոր չէ պատասխանել _____ 4	
C.7	Իսկ ի՞նչ երեխա էր ցանկանում ձեր մայրը, որ դուք ունենայիք ձեր առաջին հղիության ժամանակ՝ աղջի՞կ, թե՞ տղա:	Աղջիկ _____ 1 Տղա _____ 2 Տարբերություն չկար _____ 3 Հնարավոր չէ պատասխանել _____ 4	
C.8	Քանի՞ երեխա եք ունեցել: Նրանցից քանի՞սն են աղջիկ և քանիսը՝ տղա:	Աղջիկ _____ Տղա _____	
C.9	Ձեր ընտանիքում ո՞վ է որոշում, թե քանի աղջիկ և քանի տղա դուք պիտի ունենաք:	Ինքս _____ 1 Ամուսինս /զուգընկերս _____ 2 Ես և ամուսինս _____ 3 Սկեսուրս _____ 4 Այլ (բացատրեք) _____ 5	
C.10	Որքանո՞վ եք դուք իրավասու որոշելու, թե քանի աղջիկ կամ քանի տղա եք ցանկանում ունենալ:	Մեծապես _____ 1 Ինչ-որ չափով _____ 2 Բոլորովին իրավասու չեմ _____ 3	
C.11	Ձեր շրջապատում նախապատվությունն ավելի շատ տրվում է՝ տղաների՞ն թե՞ աղջիկներին:	Տղաներին _____ 1 Աղջիկներին _____ 2 Հավասարապես _____ 3	
C.12	Ձեր կարծիքով ինչու՞ է այդպես:		

C.13	Ձեր ընտանիքում նախապատվությունն ավելի շատ տրվում է տղաներին, թե՞ աղջիկներին:	Տղաներին _____ 1 Աղջիկներին _____ 2 Հավասարապես _____ 3	→ C 14 → C 15
C.14	Ինչու՞ է ձեր ընտանիքը նախապատվություն տալիս տղա, այլ ոչ թե աղջիկ երեխաներին: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Տղաները ապահովության երաշխավորն են _____ 1 Տղաները հեղինակություն և ուժ են մարմնավորում _____ 2 Տղաները կարող են ֆին. աջակցություն ապահովել _____ 3 Տղաներն ունեցվածքի ժառանգորդներ են _____ 4 Տղաները տոհմը շարունակողներն են _____ 5 Տղաները հայրենիքի պաշտպան են _____ 6 Ամուսնությունից հետո աղջիկն այլևս քոնը չէ _____ 7 Աղջկան մեծացնելը բեռ է _____ 8 Աղջիկը ֆին. օգնություն չի կարող ապահովել _____ 9 Աղջիկը ծնողների համար ծեր տարիքում նեցուկ չէ _____ 10 Աղջկա հարցում ֆին. ներդրումն արդարացված չէ _____ 11 Աղջիկները ավելի քիչ հնարավորություններ ունեն կյանքում/հասարակությունում _____ 12 Ամբողջ հոգսը ընկնում է կանանց վրա _____ 13 Ծնողին դժվար է տեսնել աղջկա տանքանջները _____ 14 Աղջկան ամուսնացնելը հոգեբանորեն ծանր է _____ 15 Վախենում եմ ընտանեկան բռնությունից _____ 16 Այլ (նշել) _____ 17 *Եթե C.13- պատասխանը 1 է, ապա անցնել բաժին D*	
C.15	Ինչու՞ է ձեր ընտանիքը նախապատվություն տալիս աղջիկ, այլ ոչ թե տղա երեխաներին: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Աղջիկը ծնողի հոգևոր նեցուկն է _____ 1 Աղջիկը ծնողին հասնող է _____ 2 Աղջիկը ծնողի համար ծեր տարիքում նեցուկ է _____ 3 Աղջիկն արդարցնում է ծնողի ֆինանսական ներդրումները _____ 4 Այլ (նշել) _____ 5 *Եթե C.13- պատասխանը 2 է, ապա անցնել բաժին D*	

ԲԱԺԻՆ D: ՀՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այժմ ես կցանկանայի իմանալ, թե ինչպիսի արդյունք է ունեցել ձեր հղիություններից յուրաքանչյուրը՝ սկսած ձեր ամուսնության օրվանից: Խնդրում եմ սկսել ձեր առաջին հղիությունից….

D.1 Հղիության պատմություն	Առաջին հղիություն	Երկրորդ հղիություն	Երրորդ հղիություն	Չորրորդ հղիություն	Հինգերորդ հղիություն	Վեցերորդ հղիություն	Յոթերորդ հղիություն	Ութերորդ հղիություն	Իններորդ հղիություն	Տասներորդ հղիություն
D.2 Քանի՞ ամիս էր անցել վերջին հղիությունից / ծննդաբերությունից										
D.3 Այն պահին, երբ իմացաք թե հղի եք, ուզու՞մ էիք արդյոք երեխա ունենալ հենց այդ ժամանակ, ուզու՞մ էիք արդյոք հետաձգել երեխա ունենալը, թե՞ այլևս չէիք ցանկանում (ավել) երեխաներ ունենալ *1. Ուզում էի երեխա ունենալ հենց այդ ժամանակ* *2. Ուզում էի հետաձգել* *3. Այլևս չէի ուզում երեխա ունենալ*										
D.4 Հղիության արդյունքը *1. Կենդանի երեխա* *2. Մեռելածնություն* *3. Հղիության արհեստական ընդհատում* *4 .Վիժում* *5. Հղիությունը դեռևս չի ավարտվել*										
D.5 Ինչ սեռի երեխա էիք ուզում ունենալ հղիության ժամանակ *1=Տղա* *2=Աղջիկ* *3=Միևնույն էր*										
D.6 Ենթարկվել եք արդյոք ուլտրաձայնային հետազոտության հղիության ընթացքում *1=Այո* *2=Ոչ*										
D.7 Երեխայի սեռը 1=Արական 2=Իգա կան										
D.8 Երեխայի անունը										
D.9 Ո՞ր թվականին և ո՞ր ամսին է ծնվել երեխան (անունը)										
D.10 Երեխան արդյոք կենդանի՞ է *1=Այո* *2=Ոչ*										
D.11 Երեխայի տարիքն այս պահին (արտահայտված տարիներով)										

ՄԻԱՅՆ ԹՎԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԱՐՑԵՐ

D.12 Հղիությունների ընդհանուր թիվը _____

D.13 Ընդհատված հղիությունների ընդհանուր թիվը
(Ավելացրեք “ուզում էի հետաձգել” կամ “չէի ուզում ունենալ”) _____

D.14 Նորմալ ավարտված ծնունդների ընդհանուր թիվը _____

D.15 Ծնված աղջիկ երեխաների ընդհանուր թիվը _____

D.15.1 որոնցից կենդանի են _____

D.16 Ծնված տղա երեխաների ընդհանուր թիվը _____

D.16.1 որոնցից կենդանի են _____

D.17 Քանի՞ անգամ եք ենթարկվել ուլտրաձայնային հետազոտության _____

D.18 Դպրոցական տարիքի երեխաների թիվը (6 տարեկանից բարձր) _____

ԲԱԺԻՆ E: ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ II

Լրացնել, եթե C.13 կետում նախապատվությունը տրվել է ՏՂԱ երեխաներին (եթե C.13 =1-ի)

Q.N.	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
E.1	Ձեր ընտանիքում առաջին երեխան աղջիկ է, թե տղա:	տղա ____ 1 աղջիկ ____ 2	
E.2	Երբ նա ծնվեց, արդյո՞ք որևէ մեկը ձեր ընտանիքում արտահայտեց իր դժգոհությունը սեռի վերաբերյալ: Եթե այո, ապա ո՞վ էր դա: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Ինքս ____ 1 Ամուսինս /զուգընկերս ____ 2 Սկեսուրս ____ 3 Սկեսրայրս ____ 4 Մայրս ____ 5 Այլ ազգականներ ____ 6 Ոչ ____ 7	
E.3	Արդյոք ձեզ վրա եղե՞լ է կամ կա՞ որևիցե ճնշում, թե հաջորդ երեխան պիտի անպատճառ տղա լինի:	Այո ____ 1 Ոչ ____ 2	
E.4	Ո՞վ էր կամ ո՞վ է ձեզ ամենաշատը ճնշում:	Ամուսինս /զուգընկերս ____ 1 Սկեսուրս ____ 2 Սկեսրայրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5	
E.5	Ինչով է պայմանավորված այդ ճնշումը:		
E.6	Ինչպիսի՞ միջոցներ եք ձեռնարկել (կամ ձեռնարկում), որպեսզի ձեր հաջորդ երեխան տղա լինի: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Դեղաբույսեր եմ ընդունել, դիմել եմ ավանդական բժշկության մեթոդներին ____ 1 Խորհրդակցել եմ բժշկի հետ ____ 2 Ենթարկվել եմ ուլտրաձ. հետազոտ. ____ 3 Այլ (նշեք) ____ 4 Ոչինչ չեմ ձեռնարկել ____ 5	→ E.8
E.7	Արդյոք այդ միջոցները նպաստել են (կամ նպաստում են):	Այո ____ 1 Ոչ ____ 2 Արդյունքը դեռ հայտնի չէ (հղիությունը դեռ շարունակվում է) ____ 3	
E.8	Ձեր ընտանիքում վերջին երեխան աղջիկ է ծնվել, թե՞ տղա:	տղա ____ 1 աղջիկ ____ 2	

E.9	Երբ նա ծնվեց, արդյոք որևէ մեկը ձեր ընտանիքում արտահայտեց իր դժգոհությունը սեռի վերաբերյալ: Եթե այո, ապա ո՞վ էր դա: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Ես ինքս ____ 1 Ամուսինս /զուգընկերս ____ 2 Սկեսուրս ____ 3 Սկեսրայրս ____ 4 Մայրս ____ 5 Այլ ազգականներ ____ 6 Ոչ ____ 7	
E.10	Արդյոք ձեզ վրա եղե՞լ է կամ կա՞ որևիցե ճնշում, թե ձեր վերջին երեխան պիտի անպատճառ տղա լինի:	Այո ____ 1 Ոչ ____ 2	
E.11	Ո՞վ էր կամ ո՞վ է ձեզ ամենաշատը ճնշում:	Ամուսինս /զուգընկերս ____ 1 Սկեսուրս ____ 2 Սկեսրայրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5	
E.12	Ինչպիսի՞ միջոցներ եք ձեռնարկել (կամ ձեռնարկում), որպեսզի ձեր վերջին երեխան տղա լինի: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Դեղաբույսեր եմ ընդունել, դիմել եմ ավանդական բժշկության մեթոդներին ____ 1 Խորհրդակցել եմ բժշկի հետ ____ 2 Ենթարկվել եմ ուլտրաձ. հետազոտ. ____ 3 Այլ (նշեք) ____ 4 Ոչինչ չեմ ձեռնարկել ____ 5	→ E.14
E.13	Արդյո՞ք այդ միջոցները նպաստել են (կամ նպաստում են):	Այո ____ 1 Ոչ ____ 2 Արդյունքը դեռ հայտնի չէ (հղիությունը դեռ շարունակվում է) ____ 3	
E.14	Քանի որ ձեր վերջին երեխան աղջիկ է, արդյոք ձեզ վրա շարունակվու՞մ է ճնշումը, որպեսզի նաև տղա ունենաք:	Այո ____ 1 Ոչ ____ 2 Չեմ կարող ասել ____ 3	

ԲԱԺԻՆ F: ԱՂՋԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ II

Լրացնել, եթե C.13 կետում նախապատվությունը տրվել է ԱՂՋԻԿ երեխաներին (եթե C.13 =2-ի)

Q.N.	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
F.1	Ձեր ընտանիքում առաջին երեխան տղա է, թե աղջիկ է:	տղա ____ 1 աղջիկ ____ 2	
F.2	Երբ նա ծնվեց, արդյո՞ք որևէ մեկը ձեր ընտանիքում արտահայտեց իր դժգոհությունը սեռի վերաբերյալ: Եթե այո, ապա ո՞վ էր դա: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Ինքս ____ 1 Ամուսինս /զուգընկերս ____ 2 Սկեսուրս ____ 3 Սկեսրայրս ____ 4 Մայրս ____ 5 Այլ ազգականներ ____ 6 Ոչ ____ 7	
F.3	Արդյոք ձեզ վրա եղե՞լ է կամ կա՞ որևիցե ճնշում, թե երկրորդ երեխան պիտի անպատճառ աղջիկ լինի:	Այո ____ 1 Ոչ ____ 2	
F.4	Ո՞վ էր կամ ո՞վ է ձեզ ամենաշատը ճնշում:	Ամուսինս /զուգընկերս ____ 1 Սկեսուրս ____ 2 Սկեսրայրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5	
F.5	Ինչո՞վ է պայմանավորված այդ ճնշումը:		
F.6	Ինչպիսի՞ միջոցներ եք ձեռնարկել (կամ ձեռնարկում), որպեսզի ձեր երկրորդ երեխան աղջիկ լինի: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Դեղաբույսեր եմ ընդունել, դիմել եմ ավանդական բժշկության մեթոդներին ____ 1 Խորհրդակցել եմ բժշկի հետ ____ 2 Ենթարկվել եմ ուլտրաձ. հետազոտ. ____ 3 Այլ (նշեք) ____ 4 Ոչինչ չեմ ձեռնարկել ____ 5	→ F.8
F.7	Արդյոք այդ միջոցները նպաստե՞լ են (կամ նպաստու՞մ են):	Այո ____ 1 Ոչ ____ 2 Արդյունքը դեռ հայտնի չէ (հղիությունը դեռ շարունակվում է) ____ 3	

Ստորև նշված հարցերը տրվում են միայն այն դեպքում, եթե d7 վանդակում նշված է, որ տվյալ ընտանիքում անդրանիկ երեխան տղա է եղել

Q.N	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
F.8	Ձեր ընտանիքում վերջին երեխան տղա է ծնվել, թե՞ աղջիկ:	տղա ____ 1 աղջիկ ____ 2	
F.9	Երբ նա ծնվեց, արդյո՞ք որևէ մեկը ձեր ընտանիքում արտահայտեց իր դժգոհությունը սեռի վերաբերյալ: Եթե այո, ապա ո՞վ էր դա: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Ինքս ____ 1 Ամուսինս /զուգընկերս ____ 2 Սկեսուրս ____ 3 Սկեսրայրս ____ 4 Մայրս ____ 5 Այլ ազգականներ ____ 6 Ոչ ____ 7	
F.10	Արդյոք ձեզ վրա եղե՞լ է կամ կա՞ որևիցե ճնշում, թե ձեր վերջին երեխան պիտի անպատճառ աղջիկ լինի:	Այո ____ 1 Ոչ ____ 2	
F.11	Ո՞վ էր կամ ո՞վ է ձեզ ամենաշատը ճնշում:	Ամուսինս /զուգընկերս ____ 1 Սկեսուրս ____ 2 Սկեսրայրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5	
F.12	Ինչպիսի՞ միջոցներ եք ձեռնարկել (կամ ձեռնարկում), որպեսզի ձեր վերջին երեխան աղջիկ լինի: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Դեղաբույսեր եմ ընդունել, դիմել եմ ավանդական բժշկության մեթոդներին ____ 1 Խորհրդակցել եմ բժշկի հետ ____ 2 Ենթարկվել եմ ուլտրաձ. հետազոտ. ____ 3 Այլ (նշեք) ____ 4 Ոչինչ չեմ ձեռնարկել ____ 5	→ F.14
F.13	Արդյո՞ք այդ միջոցները նպաստել են (կամ նպաստում են):	Այո ____ 1 Ոչ ____ 2 Արդյունքը դեռ հայտնի չէ (հղիությունը դեռ շարունակվում է) ____ 3	
F.14	Քանի որ ձեր վերջին երեխան տղա է, արդյոք ձեզ վրա շարունակվու՞մ է ճնշումը, որպեսզի նաև աղջիկ ունենաք:	Այո ____ 1 Ոչ ____ 2 Չեմ կարող ասել ____ 3	

ԲԱԺԻՆ G: ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԾԾՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցման բոլոր մասնակիցների համար

Q.N.	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ	Տե՛ս
G.1	Երբևէ լսել եք որևէ մեթոդի մասին, որով հնարավոր լիներ որոշել երեխայի սեռը սաղմնային փուլում: [խնդրում ենք ստուգել D.6 կետի հետ]	Այո ____ 1 Ոչ ____ 2	→ G 18
G.2	Կարո՞ղ եք ինձ պատմել այդ մեթոդների մասին: *(Այս հարցին հնարավոր է տալ 1-ից ավելի պատասխաններ:)*	Ուլտրաձայնային ____ 1 Ամնիոցենտեզ ____ 2 Ավանդական (նշել) ____ 3	
G.3	Որտեղի՞ց եք առաջին անգամ լսել այդ մեթոդի մասին:	Ամուսնուցս /զուգընկերոջիցս ____ 1 Ծնողներիցս ____ 2 Սկեսրոջիցս ____ 3 Ընկերներից, հարազատներից ____ 4 Բուժհիմնարկից ____ 5 Հրապարակումներից ____ 6 ՋԼՄ-ներից ____ 7 Այլ (նշել) ____ 8	
G.4	Իսկ որտե՞ղ կարելի է դիմել այդ մեթոդը ստանալու համար:	Ծննդատանը ____ 1 Պոլիկլինիկայում ____ 2 Ուլտրաձայնային կաբինետում ____ 3 Ախտորոշման կենտրոնում ____ 4 Այլ վայրում ____ 5	
G.5	Մատչելի՞ է արդյոք այդ վայրը Ձեր համար (նախածննդյան փուլում երեխային սեռը որոշելու նպատակով)	Այո ____ 1 Ոչ ____ 2 Չգիտեմ ____ 3	
G.6	Փորձե՞լ եք արդյոք վերջին 5 տարիների ընթացքում օգտվել այդ մեթոդից՝ նախածննդյան փուլում երեխայի սեռը որոշելու նպատակով	Այո ____ 1 Ոչ ____ 2	→ G 18
G.7	Որտե՞ղ եք դիմել:	Ծննդատանը ____ 1 Պոլիկլինիկայում ____ 2 Ուլտրաձայնային կաբինետում ____ 3 Ախտորոշման կենտրոնում ____ 4 Այլ վայրում ____ 5	
G.8	Ո՞վ է առաջարկել ձեզ օգտվել այդ հետազոտություններից:	Ինքս ____ 1 Ամուսինս /զուգընկերս ____ 2 Սկեսուրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5	

G.9	Հղիության ինչ ժամկետում էիք, երբ անցաք այդ ստուգումը:	_____ շաբաթական Չեմ հիշում _____	
G.10	Ինչ ցույց տվեցին ստուգման արդյունքները:	Տղա _____ 1 Աղջիկ _____ 2 Սեռը որոշել չհաջողվեց _____ 3	
G.11	Երեխայի սեռը պարզելուց հետո դուք ցանկանու՞մ էիք արդյոք այդ սեռի երեխա:	Այո _____ 1 Ոչ _____ 2 Չգիտեմ _____ 3	
G.12	Երեխայի սեռը պարզելուց հետո ձեր ամուսինը / զուգընկերը ցանկանու՞մ էր արդյոք այդ սեռի երեխա:	Այո _____ 1 Ոչ _____ 2 Չգիտեմ _____ 3	
G.13	Երեխայի սեռը պարզելուց հետո ձեր ընտանիքը ցանկանու՞մ էր արդյոք այդ սեռի երեխա:	Այո _____ 1 Ոչ _____ 2 Չգիտեմ _____ 3	
G.14	Ինչ արեցիք երեխայի սեռը պարզելուց հետո:	Այդ պատճառով գնացի աբորտի _____ 1 Ընդհատեցի դեղորայք աբորտի միջոցով _____ 2 Ընդհատեցի հղիությունը այլ մեթոդով _____ 3 Հղիութ. ընդհատվեց ինքնաբ.վիժումով _____ 4 Շարունակեցի հղիությունը _____ 5	→ G.17
G.15	Ո՞վ կայացրեց հղիության արհեստական ընդհատման մասին որոշումը՝ դու՞ք, թե մեկ այլ անձ:	Ինքս _____ 1 Ամուսինս /զուգընկերս _____ 2 Սկեսուրս _____ 3 Մայրս _____ 4 Այլ ազգականներ _____ 5 Բժիշկը/կլինիկան _____ 6	
G.16	Որտեղ կատարվեց հղիության ընդհատումը:	Տանը՝ առանց բժշկի դիմելու _____ 1 Ծննդատանը _____ 2 Պոլիկլինիկայում _____ 3 Այլ վայրում _____ 4	
G.17	Ինչ կարող էր պատահել, եթե ծննդաբերեիք անցանկալի սեռի այդ երեխային:		
G.18	Հայաստանի հանրապետությունում աբորտը օրինական է:	Այո _____ 1 Ոչ _____ 2 Չգիտեմ _____ 3	
G.19	Հայաստանի հանրապետությունում հղիության ո՞ր ժամկետում է օրինական համարվում հղիության ընդհատումը:	Մինչեվ 12 շաբաթ _____ 1 Ցանկացած ժամկետ_____ 2 Չգիտեմ _____ 3	

Շնորհակալ եմ ձեր տրամադրած ժամանակի համար: Մեր հարցազրույցն ավարտված է: Ունեք արդյոք որևիցե հարցեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

“_____“_____2011թ

Բուժհաստատության տարբերակիչ համարը _____ *Հարցաթերթիկի համարը* _____

ԲԱԺԻՆ A

	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ
A.1	Քանի տարեկան եք:	Լրացել է իմ _____ տարեկանը
A.2	Ձեր վերջին դաշտանի օրը	Ամիս _____ ամսաթիվ _____
A.3	Քանի հղիություն եք ունեցել (նշեք)	1 2 3 4 եվ ավել
A.4	Հղիության քանի արհեստական ընդհատում եք ունեցել (նշեք)	1 2 3 4 եվ ավել
A.5	Քանի՞ աղջիկ և քանի տղա երեխա եք ունեցել:	Աղջիկ _____ Տղա _____
A.6	Ձեր վերջին երեխայի սեռը	Աղջիկ _____ 1 Տղա _____ 2
A.7	Ինչով է ավարտվել ձեր նախորդ հղիությունը	Ծննդաբերություն _____ 1 Ինքնաբեր վիժում _____ 2 Արհեստական ընդհատում _____ 3 *պատճառը.*
A.8	Ներկա հղիության ընդհատման պատճառը	Սոցիալ-տնտեսական պայմանները _____ 1 Բժշկական ցուցումով _____ 2 Չպլանավորված հղիություն _____ 3 Սեռով պայմանավորված _____ 4 Այլ /նշեք/ _____ 5

Եթե հղիության արհեստական ընդհատումը պայմանավորված է սեռի ընտրությունով՝ խնդրում եմ լրացրեք հաջորդ էջը:

ԲԱԺԻՆ B

	Հարցեր	Կոդավորման/ծածկագրման կատեգորիաներ
B.1	Ձեր ընտանիքում ո՞վ է որոշում, թե քանի աղջիկ և քանի տղա դուք պիտի ունենաք:	Ես ինքս ____ 1 Ամուսինս ____ 2 Ես և ամուսինս ____ 3 Սկեսուրս ____ 4 Այլ (նշեք) ____ 5
B.2	Ձեր ընտանիքում նախապատվությունն ավելի շատ տրվում է տղաներին, թե՞ աղջիկներին:	Տղաներին ____ 1 Աղջիկներին ____ 2 Հավասարապես ____ 3
B.3	Ինչու՞ է ձեր ընտանիքը նախապատվություն տալիս տղա, այլ ոչ թե աղջիկ երեխաներին:	Տղաները հեղինակություն և ուժ են մարմնավորում ____ 1 Տղաները կարող են ֆին. աջակցություն ապահովել ____ 2 Տղաներն ունեցվածքի ժառանգորդներ են ____ 3 Տղաները տոհմը շարունակողներն են ____ 4 Տղաները հայրենիքի պաշտպան են ____ 5 Ամուսնությունից հետո աղջիկն այլևս քոնը չէ ____ 6 Աղջիկը ծնողների համար ծեր տարիքում նեցուկ չէ ____ 7 Աղջիկները ավելի քիչ հնարավորություններ ունեն կյանքում/հասարակությունում ____ 8 Ամբողջ հոգսը ընկնում է կանանց վրա ____ 9 Աղջկան ամուսնացնելը հոգեբանորեն ծանր է ____ 10 Վախենում եմ ընտանեկան բռնությունից ____ 11 Չեմ կարող պատասխանել ____ 12 Այլ (նշեք) ____ 13
B.4	Ո՞վ կայացրեց ներկա հղիության արհեստական ընդհատման մասին որոշումը:	Ես ինքս ____ 1 Ամուսինս ____ 2 Սկեսուրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5 Բժիշկը/կլինիկան ____ 6 Այլ (նշեք) ____ 7
B.5	Արդյոք ձեզ վրա եղել է կամ կա՞ որևիցե ճնշում, թե հաջորդ երեխան պիտի անպատճառ տղա լինի:	Այո ____ 1 Ոչ ____ 2 հարցման ավարտ
B.6	Ո՞վ էր կամ ո՞վ է ձեզ ամենաշատը ճնշում:	Ամուսինս ____ 1 Սկեսուրս ____ 2 Սկեսրայրս ____ 3 Մայրս ____ 4 Այլ ազգականներ ____ 5

Հարցման ավարտ